միոչէ դավտարուումն ջոկ գրեցի. չուրի մին դինարն
գրած եմ ուրիշ դավտարուումն, թէ խորակ։ Ամենայն
հաբն տէսայ, ջանն տէղս գրեցի, որ էլաւ կէ թուման։
Աստուած վայելումն տայ։ || Դարցեալ, այս տներս որ 76v
վերատին շինեցի, թէպէտ փոքր, ապայ գիտեմք թէ
գրոց, թէ բրոց, թէ մեծ մամիս, որ էր Բանաւշայ,
հարցանելով իմացայ, որ այս տներս բեճ տարի եղև,
որ պապէ ի պապ, որդոց որդիք որ մեր ավագն ժա-
ռանգէ։ Ես Զաքարիայ այսպէս իմացայ գրոց, տէսայ,
որ սոքայ էն. նախ և առաջ այր ոմն. Բ եխպայրք էին։
Այս տան տէրն հօր անունն չիմացայ։ Այս Բ եխ-
պարքս մինն Շախամիր, մինն՝ Ազամիր։ Սոքայ բա-
ժանեցան։ Ազամիրի յիսէն այս գրած տներս այ։ Շա-
խամիրի յիսէն այս յարևմտեան կողմի տներն այ։
Շախամիրիս յիշատակ չմնաց. մնաց տուն անտէր։
Սիթամով այր ոմն Ամիրխան Շախամիրի տներն զավա
կոնի, կտայ իւր ախպէր որդի Մարխան, որ է տէղս

գրած Սէթու պապն։ Դարցեալ, Աղամիրն առ Աստուած գնայ։ Մնաց սորայ մին աղչիկ, անունն Բանաւշահ։ Այս Բանաւշահս գնայ Խձայձոր, որ է Ներքի թաղն, մարդի, անունն Երանջան։ Այս Երանջանս առ Աստուած գնայ։ Մնաց Բ տղայ, մին աղչիկ։ Աղչիկն գնայ մարդու, մնաց Բանաւշահն, իւր Բ տղերքն. մեծ տղի || անունն Աղամիր, պզտիկն՝ Ամիր, որ լաւ կարդացող դառցաւ, անվանեցին Սարկավաք։ Այս Բանաւշահս որ իւր այրն մեռնի, օսմանլուի[1]) ժամանակ էր ու աղութիւն. այն Ամիրխանն կու գայ, թէ Աղամիրի յիսէն տէրութիւն անէ։ Այս Բանաւշահս որբ գոլով՝ փաշայ, շար ընկնի, գայ իւր հայրենիքն զաֆտ անէ, մարդի տներն ձեռաց գնայ։ Այս Բանաւշահս տղոցն հարսանիք անէ. Աղամիրին ուզէ Ներքի թաղէն Գօզալի դուստր Սավգուլն ու Սարկավաքին ուզէ մելիք Աղավելի դուստր Խոստրոմն։ Այս Բանաւշահս ծ տարի որբ մնաց, պատճառ հայրենի տներն ու տղերքն, թէ այլոց ձեռք չի ընկնի։ Այս Բանաւշահիս մայր ունէր անվանի, մեծ ազգի, անունն՝ Խանում, որ որբ շատ մնաց։ Տէղս գրած սրահն Խանումն էր շինել որբ ժամանակին։ Շատ աշխատաւոր կին[2]) էր։ Աստուած իւրն ողորմի։ Դարցեալ, Աղամիրէն, Սավգուլէն էլաւ Բ զաւակ, Գ աղչիկ Գ տղայ։ Դ տղէն պզտիկ մեռան։ Մնաց Գ աղչիկ, մեծացան. մեծն՝ Խանում, միջնակն՝ Փարիխան, պզտիկն՝ Զարիֆ, որ աւագանի անուն էր Հուխամէ։ Սոքայ գն էլ[3]) գնացին մարդի, զաւակի տէր դառան։ Ամայ Խանումն ու Փարիխանն Բ Բ մարդ առան, Զարիֆն մին մարդ առաւ։ || Աղամիրի Բ տղէն որ մնաց, մեծն Շմաւոն է, որ այս դավտարումս[4]) անունն գրած շատ տէղ կայ. պզտիկն դավտար գրող մեղաւոր Զաքարէս եմ։ Դարցեալ, մեծ Խանումն, որ է մեծ Աղամիրի կը-

77r

77v

1) Ձեռագրում՝ օսմալուի։
2) » գին։
3) » էր։
4) » դաֆտարումս։

նիկն, սայ մին մարդ առաւ, Բանաւշէն մին մարդ առաւ, Աղամիրն մին կնիկ առաւ։ Շմաւոն Բ կին առաւ, առաջին՝ այս Մարխանի որդի Մուրադի դուստրն առաւ, անունն Գուլաղէն։ Սորայանէ էլաւ գ տղայ, մին աղջիկ. անունն Շուշան։ Շուշան գնաց մարդի, ա տարի մնաց, մեռաւ, զաւակ չի մնաց։ Ա. տղէն պզտիկ մեռաւ, ա տղէն, անունն Խանազատ, Բ ամաց մեռաւ, ա տղէն Գրիգորն է, ահայ ծգ տարու է։ Այս Գուլաղէս Թվին ռճթու�մեռաւ։ Այս Շմաւոնս գնաց Երևան, վերստին կին առաւ, անունն Գուլում, Թվին ռճծուإմ։ Դարցեալ, ես Զաքարիայ Թվին ռճգուإմ յունվարի իբուإմ որ առի ավել անունն Տրունկցունց Հերապետի դուստր Բէկումն ի կնութիւն։ Ես Զաքարիայ էի իգ ամաց, Բէկումն ժէ ամաց։ Մեզնէ Թվին ռճգուإմ էլաւ ա աղջիկ, անունն Մարիամ։ Այս Մարիամս Թվին ռճի առ Աստուած գնաց։ Աստուած փոխն բարի յիշատակ տայ։ Դարցեալ այս դավտարումս Քուրդունց Աղամիր շատ եմ գրել, զերայ Շախամիրի եխպայր Աղամիրն ավել անունն կոչէին Քուրդ վասն պատճառի։ Դարցեալ Սարկավաքն մեռաւ, մնաց գ տղայ։ Բ մեծ տղէն || մեռաւ, մնաց մին տղայ, անունն Ալէքսան։ Այս Սարկավաքս մին կին առաւ. Բ տղէն էլ ա ա կին առաւ. այս է։ Աստուած սիրողն ասի այս նախնեաց մէկ հայր մեզայ։ Աստուած ձեզ ողորմի։ 78

* Սարկավաքի միջնակ տղի անուն էր Տէր-Մելքում. լաւ քահանայ էր. մեռաւ, մնաց ա տղայ, անունն Ոհանէս։ Ես Զաքարէս այս Տէր-Մելքումիս[1]) մօտ կարդացի։ Թվին ռճիբ մարտի իբ ես Զաքարես, իմ կին Բէգումն առ Աստուած փոխեցաւ։ Այլվի այս Թվիս օգոստոսի թուإն ես Զաքարես գնացի, վերի գետցի Դիշի-գէդուտ Ովանէսին ունէր ազաբ աղջիկ իա ամաց, այս առի կին։

1 Ձեռագրում՝ Տէր-Մելքումս։

Թվին ռճիգ հոքտեմբերի լաուն էլաւ տղայ, անունն Միքայել եղաւ։

1125 մայիսի իգուն, օրն գշաբաթ, էլաւ մին աղչիկ, անուն եղաւ Սավգուլ։ 1127 մարտի գուն օրն բշաբթի, ելաւ մին տղայ, անունն եղաւ Գափրիէլ։

** 1130 փետրվարի բուն օրն գշաբաթ, մին տղայ էլաւ, անունն եղաւ Սահակ։ Թվին 1132 ապրիլի թուն էլաւ մին տղայ, անունն եղին Ովանէս, օրն բշաբթի։

1134 յուլիսի ծուն, օրն ուրբաթ, ինձ Զաքարիս ելաւ մին աղչիկ, անունն եղաւ Բանաւշահ, որ է իմ Զաքարիս հայրենի մամու անունն։[1])

§ 53 Թվին ռճժթ մայիսի մէկուն Ագուլիս, թէ Դաշտն, թէ Ուրդուվար խիստ մեղացն մեր մորեխ եկաւ։ Այս բ ամ է, որ Ղափանն, Դզմար, Ղարադաղն մորէխ խիստ կերաւ։ 74v

Թվին ռճժթ յունիսի եուն այսօր Թարվեզու Միրզայ Իբրահիմէն դարուղայ եկաւ Ագուլիս՝ համ մալիջհաթն տանի, անունն Բահրամ բէկ, ի ձիաւորաւ եկաւ, բ օրի կացաւ։ Օրն մին թուման խարջ ունէր։ Ապայ ժէ թուման զուլուղ առաւ, ապայ գնաց միուս խասէրն, գերայ ե խասն էլ[2]) Միրզայ Իբրահիմի զաֆտուն էր շահի հրամանաւ. այս էդ

§ 54 Թվին ռճժթ յունիսի ժգուն որ այսօր մեր եխպայր Սիամոն, որ է Շմաւոն, Երևանայ եկաւ Ագուլիս մին ի մարդ յետն, ոմն գռանկ, ոմն երևանցի հայ։ Մին ժ օրի կացան, յունիսի իգուն գնաց Թարվեզ, որ գնայ 75r

1) Հաջորդում է e հավելագրությունն ուրիշ ձեռագրով։
2) Ձեռագրում էր։

Ըսպհան։ Զերայ այս ծը տարի այ, որ Երևան խանե-
ի դուլուղումն է. համ զառաբի այ, համ խանի գա-
ըաք ժարաղ է։ Գ խանն այս է. առաջ՝ Նաջաֆղուլի
խանին, որ սորայանէ շատ շախ արար, յետով՝ Աբաս-
ղուլի խանին, յետով Սէֆիղուլի խանին։ Շատ փոդ,
ըոզակ կիտեց, որ համբաւն Հնդստան ու Ֆռանգստան
հասաւ։ Ապա յետի խանն, որ է Սէֆիղուլի խան,
սայ շատ սիթամ արաւ։ Այս համբաւէս Շահ-Սլէյման
յօքմ աղարկեց, զառաֆխանի պատճառէն տարան Ըս-
պհան։ Ապայ կամօքն Աստուծոյ է ամիս կենդանի
մնաց, ապայ դէքտեմբերի էումն առ Աստուած փոխե-
ցաւ, եղաւ Ըսպհան Զուղայու հանգիստներումն պատ-
վով, նշանաւոր տէղի։ Վերայ մեծ մատուռ շինեցին։
Մահն աջալով, բիաջալն Աստուծոյ է գիտելի։ Ամայ
շատ դրամ գնաց, զերայ ոմն հախ, ոմն նուհախ, ոմն
սիթամի, ոմն զալումի, որ մինչի մին տարին բռ թու-
ման սորայ գնաց։ Վերջն, մնաց, էթէ ունի բարի գործ,
Աստուած գիտէ։

§55 Թվին ռճծթ յուլիսի իգումն Ագուլիս որ ես Զաքա- 78v
րիայ մեր խիզանով, այլ ուրիշի խիզան, շատ ուխտ-
վոր, գնացինք Բստու վանքն սուրբ Նշան ուխտ։
Այս այն սուրբ Նշանն է, որ Քրիստոս աշակերտաց
ոտնն լվաց, այս խաչս այն թաշտի պղինձն է։ Սորայ
առաջնորդն էր այս գեղիս, որ է Բստուցի, Ալէքսան
վարդապետն։ Գ օրէն գնացինք, եկինք Ագուլիս։

Թվին ռճծթ դեքտեմբերի ծեումն Ագուլիս որ Վերի
թաղի սուրբ Քրիստափոր անվան եկեղեցին ինքնին
փլաւ, զերայ գ խորանն երած քարփիչով ին շինել
այլն փայտով ին շինել։ Զերայ այս եկեղեցիս Թա-
թէոս առաքեալն ելի շինած. եկաւ մինչև թվին ռեք
վերատին այնպէս ին շինել։ Քանզի բ թագաւորաց
ժամանակին էին շինել. մինն՝ օսմանցոց Սուլթան
Մուրադին, մինն՝ պարսից Շահ-Սէֆուն։ Այս բ թա-
գաւորաց կռիւ էր Երևանայ բերթին վերայ, վասն այն՝

կէսն երած քարփիչով, կէսն փայտով շինեցին. վասն
ահիւ մին տարով շինեցին։ Այսպէս շինած եկաւ, մին-
չի թվին ռճժբու�փլաւ։ Աստուծով մին քինթ չարիւն-
նեցաւ, անվնաս մնաց Աստուծով։ Սորայ առաջի շինօղն
Քրիստոսի առաքեալքն էին։ Սոյա յետնայ վերի թա-
ղի խոջայ Գուլնազարն, Քիչիբէկն, Մալխանն վերա-
կացու եղէն, ժողովրդեան փողով շինեցին, մինչև
էհաս այսմ ամի։ || Թվին ռճի ըսկիսրն արարին յին եկե- 79r
ղեցին վեր կալան, յիմն գձեցին քարով, կրով, Քուր-
դստանայ ուստայ բէրին, շինեցին մինչի եհաս հողի
հավասար։ Թվին ռճիա այլվի Քուրդստանայ ուստայ
եկին, տաշած քարով շինեցին. մինչի նոյմբեր ամիսն
հասաւ դռնեքի գլուխն. գ դուռն ունի՝ յարևմուտ, յա-
րաւ, յիւսուս[1])։ Թվին ռճիբ մարտի իուն այլվի Քուր-
դստանայնուն ուստէքն եկին. այսմ ամի ի ուստայ
եկին, այլվի տաշած քարով հասուցրին մինչի վայի
թաղ։ Նոյմբերի մէկուն ուստէքն վարցն առան, գնա-
ցին։ Դարցեալ, այս եկեղեցուս գ որմին ի ներս խաչ, ոմն
պատկեր վասն յիշատակի գրեցին։ Այս գավառաբ գրող
Զաքարէս մին Աստուածածնոյն պատկերն ես գրել
տվի։ Ամէն խաչի, թէ պատկերի մէկ մէկ թուման
տվին եկեղեցուն։

§ 56 * Թվին ռճիբ եկեղեցոյ ավաք խորանն մար- 79r
տի իբ աւրհնեցին, որ պատարագ անէն։
Միայն բ խորան էր ծածկված[2]) այսմ ամի.
այս է։

§ 57 ** Թվին ռճիգ մայիսի իեուն այ- ibid.
լվի վերոյ Քրուստանուցն[3]) ժբ
ուստայ եկօ, ասպարէքն կապեց,
կիսատ բանեքն շինեց, ել քարայ-
բան չմնաց։ Դարցեալ յասմ ա-
մի Բինիատու ուստայ բերին, մեր

1) Հեռագրում՝ յիուս։
2) » ծածված։
3) » Քրուստուցն։

վանքի դռանն փուռն շինեցին։ Վանքի հողէն քարփիչ երեցին, բերին եկեղեցոյ դ քունջ պուռճաղն դ փոշիշն արարին։ Այսմ յամի այս եղև։

Թվին ռՃԻԴ ապրիլի մէկն այլվի Ֆրղստանայ նոյն ուստէքն ժէ ուստայ եկաւ, միջի դ կամարն քարով տաշած կապեց, կիսատ քարէբան, թէ սեղան, ամէն շինեցին։ Դարցեալ, տէղիս ուստէքն,[1]) Բ ջուղեցի ուստայ, մէկի անունն Ովանէս, մինն՝ Խունդվելի, ոռքայ երած քարփիչով գլուխն փոշիշն արարին։ Մնաց կաթուղիկէն դարցեալ Ֆրղստանայ ուստէքն։ Մեծ ուստէն էր ի գէղէն Մոկսու։ Ահա կատարեցաւ։ Աստուած անփորձ պահէ։

---

1) Ձեռագրում՝ սուստէքն։

§58 Թվին ՌՃԻ յունվարի գ, տրէ գ, արամ ԻԲ, օրն ուր- 79v
բաթ, ես Զաքարիայ այսօր Ջրաւրհնիք Ագուլիս արարի
Աստուծով։

Թվին ռՃԻ յունվարի թուին Ագուլիս որ Ըսպհանայ
շաթիր եկաւ մեր վանքն, գիր բերաւ Պետրոս վար-
դապետին վերայ։ Վարդապետն ինձ Զաքարէս տարաւ
եկեղեցին, ծածուկ սև գիր տվին ձեռս, տեսայ գրած
այսպէս. Ջուղեցի խառատ ուստայ Յակոբջանէս, շոռ-
թեցի խոջայ Զաքարէս, անապատցի խոջայ Սարգիսէս
մալում նի Պետրոս վարդապետին ու Սիմոնի եխպայր
Զաքարին, որ իմանաք, զէքտեմբերի Էուին խոջայ
Շմաւոն առ Աստուած գնաց։ Խիստ շատ պարտք ու
շատ հաբ ունի. ամէն գրած էնք, մհրած։ Հալբաթէ
Զաքարէն գայ. թէ որ յետի գայ, մարդ կու գայ, կու
բերէ, շատ դարդիսար կուտան. ահա ձեզ գրեցի։ Դար-
ցեալ, ես Զաքարէս որ այս սև գիրս տէսայ, գ կսկիծ
մտաւ սիրտս. մէկ որ ախպօր մահն, Բ որ պարտքի ահն,
գ որ ճանապարհի ցուրտ ու ցաւն։ Այլ ճար չի մնաց. ա-
սացի, թէ՝ այլ ումմէքէ ասիլ միք. այսպէս գիր կամ
խաբար Ագամայ որդոց ոչ գոյ։ Զերայ պարտք շատ
ունէր. ահայ առաջի կայ գրած այսպէս։ || Դարցեալ, ես 80r
Զաքարիայ որ այս սև խաբարս լսեցի, ԺԲ օր Ագուլիս
կացայ, մարդի ասացի ոչ։ Ապայ յունվարի ԻԱուին
Ագուլայց դուս էլայ, դառն, տրտում գնացի Ըսպհան։
Դարցեալ, ես Զաքարիայ որ տանէ դուս կու լինիմ, մին
աղչիկ ունէի, յետ Ժ օրէն յետնայ առ Աստուած գնաց։
Այս պատճառէս բերէն Շմաւոնի խաբարն կու տան.
մին կսկիծն ու դառցաւ։ Ես Զաքարիա վեսրվալի ԺԲ-
ուին գնացի Ըսպհան, մին քանի օր կացայ, տեսնում՝

Աբասղուլի խանի վարիսներն գան, ինձ բռնեն, թէ՝ Շմաւոն մեզ զՅԾ թուման մին է տալու, զՅԿԲ թուման փողի չախ ա տալու։ Այս Աբասղուլի խանի վարիսներս մեծամեծ մարդիք էն, որ մինն շահի մուհըրդարն է, մինն՝ շահի էշիկ-աղասի այ, մինն ուղբաշի այ. ամէնն մեծամեծ մարդ են։ Պատճառն այս է, որ այս Շմաւոնս Երևան համ զառաբի էր, համ ըռահտար։ Աբասղուլի խանս Երևան խան էր։ Այս խանս կու մեռնի աջալով։ Խանի վէքիլներն Շմաւոնիս հաբն կուտէնուն։ Շմաւոնս բռԲԾ թուման սանադով խանին տալու կընի, տված կնի։ Մնաց Բաղի խանին տալու ռԲՅԿԵ թուման։ Մնաց զառաֆխանին ՉանիրԷ տալու ԲՅԵ թուման։ Որ Շմաւոնս էլաւ խանին տալու ռղՅՆ թուման։ Այսպէս սանադ կուտայ խանի վարսաններուն, ‖ թէ՝ չուրի զ ամիս բերեմ Ըսպհան, տամ։ Թէ զ ամիսն թամամի, տամ ոչ, այս մարդարիս օրն էռէն ա աբասի պակաս չախ տալու լինիմ։ Ես Զաքարէս այն ժամանակին ինձ տարաւ Երևան այս Շմաւոնս, շատ աղաչանք պաղատելով ինձ այս ռղՅՆ թումանիս զամին տվեց։ Զերայ Աբասղուլի խանի վարիսներն պայիլ չի կացան, թէ՝ դու Երևան Սէֆիղուլի[1]) խանի դուլուղումն է։ բալքի քեզ թողնու ոչ, գաս Ըսպհան։ Ռու ախպեր զամին կէնայ, որ փողն դու տաս Զաքարէն, Զաքարէն բերի Ըսպհան, տայ խանի վարսաններն, դիրդ առնու, բերէ։ Զերայ Աբասղուլի խանն մեռաւ, տէղն լագդի Ալխաս-Միրզին տվին, որ անվանեցաւ Սէֆիղուլի խան։ Այս մին տարի այ, որ Աբասղուլի խանն մեռաւ, տարան Մաշադն, տէղն նստաւ Սէֆիղուլի խանն։ Դարցեալ այս Շմաւոնս եսօր, վաղն գձելով՝ այս պարտքս մնայ։ Ես Զաքարէս քանի անգամ վերատին գնացի Երևան, այս Շմաւոնիս յետ կռիւ, շատ խռովութիւն, թէ՝ կամ դու գնայ Ըսպհան, քո պարտքն տուր, իմ զամինլամէն առ, տուր ինձ, կամ փող տուր,

80v

1) Զեռագրում՝ Սէֆդուլի։

ես գնամ։ Այսպէս ասելով, եսոր, վաղն գձելով մնաց, մինչ որ . . . . . .[1])
. . . . . դուս մնաց Զուղայ, խառատ Յակոբջանից 83r
ոան սմանաթ։ Ամէն մի ըստ միոչէ գ դավտար գրեցաք։ Մինն տվի Յակոբջանի տղայ Եաղուբն։ Յակոբջանն մարտի իբումն առ Աստուած փոխեց։ Մինն տվի շոթեցի խոջայ Զաքարէն։ Մինն ես Զաքարիայ աղարկեցի Շմաւոնի կնգանն։ Այս այսպէս եղև։ Դարցեալ, ես Զաքարիայ թէ ինչ չարչարանք քաշեցի, գնացի, դամինով մլթանուց թէ բաղրկանից եճ թումանպարտք արի, գողի նման թվին ռճի յուլիսի ժգումն եկի Թարվեզ։ Ես Զաքարիայ Թարվեզ եկ թաքրար դամինտամ, օգոստոսի էումն Թարվեզու դուս դամ, օգոստոսի թումն գամ Ագուլիս, պարտք անեմ, տամ մեր փեսայ Աստուածապոմն, գնայ Թարվեզ, տայ մոլթոնիքն, իմ թամասուկն ու դամինլամէքն առնու, բերի Ագուլիս, ինձ Զաքարիս հասնու։ Դարցեալ, թվին ռճի սեպտեմբերի իգումն ես Զաքարիայ Ագուլայց դուս եկայ, հոքտեմբերի մէկումն եկի Երևան։ Քանզի քանի որ եպիսկոպոս Շմաւոն մեռած էր, եկել չի Երևան, այսօր եկի Երևան։ Այս Շմաւոնիս բ տղայ, մին աղջիկ կեր Երևան։ Եկի, տեսայ, թէ մին ամիս է, որ Շմաւոնիս բ տարեկան մին տղէն, Ահարոն անունն, մեռած։ Այս էլաւ կրկին կսկիծ։ || Դարցեալ, ես Զաքարէս որ եկի 83v
Երևան, գնացի, խանն տէսայ, ամէն տէսայ, թէ Զաքայ, թէ այլ ինչ փէշքաշ քաշեցի, գնացի Աբասղուլի խանի վէքիլ Վելի աղէն, Միրզա Զէնալաբադինն տէսի։ Ըսպհանայ բերած գիրն նշանց տվի, ասաւ՝ լաւ է։ Սայ էլ ընկաւ ուրիշ բան. գահ ասաւ, թէ՝ այն գիրն աղարկել ամ Ըսպհան, գահ թէ՝ Սիամոն ժե թումանպակաս այ տվիլ։ Թէ այսպէս, թէ այնպէս, չուրի գ ամիս սայ ել մեզ չարչարեց։ Վերջն մարդ ընկաւ մէջ, մին քանի թուման իւրն տվին, այն բ թամասուկն,

---

[1]) 81-րդ և 82-րդ թերթերն (81rv և 82rv) ընկած են։

որ մինն ոբճեհ թումանի, մինն բճե թումանի, որ Շմաւոնի ձեռացայգիրն, մուհրն վերայ, ես Զաքարէս զամին ու մուհրս վերայ, այս Բ թամասուկս առնեմ, Ըսպհանայ բերած խանի վարասներուն մհրով գիրն տամ, այս Բ գիրս առնեմ։ Ահա ազատեցայ, զերայայս Ե ամէ, որ ես Զաքարէս այս գիրիս դարդումն էլ, Աստուծով առի, պրծայ։ Դարցեալ, ես յետ խանի դարդն։ Խանն ես Զաքարէս բռնեց, թէ՝ Շմաւոնիցն Ճ ոսկիս ուզեմ,[1]) որ տվել ամ, տարել Ըսպհան, որ խանջալ չինէ։ Խանջալն կամ ոսկին տուր։ Խանջալ չկայ. այս Ճ ոսկուս ժէ թուման դուս գնաց։ Մին ել բռնեց մին թարքաշի դուվի. Ի թուման դուս էլաւ։ Մին էլ բռնեց, գիր հանեց Շմաւոնի մհրովն, թէ կարմունջի ‖ վերայ 84r
ըռահտար էր Շմաւոն, Ճ թուման բաղի կայ, ահա իւր գիրն. շահի ապրանք այ, մեր չէ, բեր, տուր։ Ես Զաքարէս ասի. ես խաբար չեմ։ Ես յետ խանն վեր առաւ, թէ՝ լաւ այ, այս Ճ թումանս տալ չես, ես ել Շմաւոնի զառավխանի հաբի մուաֆասէն մին բանի համար տվել անք աթոռակալն էջմիածնումն պահի, ես ել են մուաֆասէն տալ չեմ. Շմաւոնի զառավխանի հաբն նորն կու տեսնում։ Թէ որ տէսնու, խան ինքն, բէկ ինքն, զաղի ինքն, ինադ կանի, բռ թումանով պրծանիլ չէ. ես յետ մարդ մէջ ընգան, չուրի գ ամիս Ճ թումանի ես Զաքարէս խանին գիր տամ, որ գ ամիսն թամամի, տամ։ Ես յետ խանն մարդ աղարկի Նախավկայն, աթոռակալ Միքել վարդապետն բերէ, վարդապետն գնայ էջմիածինն, մուասաֆէն բէրի, ես Զաքարէս իմ կշտիս տայ խանն, խանն տայ ինձ։ Ահա այս գրիս ել ազատեցայ. զերայ Շմաւոն Ըսպհան զընալու վախտն խանին յետ գուֆտուգու ունէին, վասն այնորիկ այս մուաֆասես դրել ին ամանաթ։ Այս այսպէս էլաւ։ Դարցեալ, ես յետ մինն գալիս այ, Ի թու-

1) Զեռագրում՝ ոսկի զուգեմ։ Կարելի յե առաջին գ-ն ավելորդ համարելով վերծանել ոսկի ուզեմ։

ման ուզում, մինն զառավլխանի գալի այ անում, մինն քաթիբու գալի անում, մինն՝ գեղի, այս ամէնն սուտ գալի են անում։ Տէսայ եվ իլաջ չի կայ, լաւն այն է, որ Շմաւոնիս խիզանն || վեր ունիմ, գնամ 84v
Ագուլիս։ Ես Զաքարիայ գնամ, խանիցն դասուր ուզեմ, թէ մեք կարիլ չենք տէղս կենալ։ Ամայ մինչի ի, ն թուման գուս ելաւ, ապայ դասուր տվեց։ Ես Զաքարէս գ օրէն միջում ծածուկ բանս տէսնում, Շմաւոնի կինն, ա տղէն, մին աղջիկն, թէ նօքար, թէ բարեկամ, ժբ, ժգ մարդ սուրբ Սարգիս շաբաթ գիշերն Երևանայ գուրս գամք Աստուծով։ գանք Խոր Վիրաբուն գ օր կենաք, տեսնուք, թէ եվ ուրիշ վարաղ չի փոխէն։ Ապայ փետրվարի գումն Երևանայ գուս եկի, փետրվարի ծառումն եկինք Ագուլիս։ Ես Զաքարէս շատ չարչարանք քաշեցի թէ Ըսպհան, թէ Երևան, քանի քանի անգամ գիս բռնեցին, գնդան գձեցին, բուխավեցին վասն այս վաթանի մոլորած ախպօր Շմաւոնիս համար։ Էթէ ամէն բան, ամէն ջաֆայ գրել ի, ծ գավտար լինէր։ Դարցեալ, մեր քեռի Ղուգազն եվ շատ ջաֆայ քաշեց, գերայ այս Շմաւոնս Ըսպհան գնալու ժամանակին այս քեռու տղայ Ղուգազըս աղարկէ, Ագուլայց տանի Երևան, գնի իւր տանն, կենայ. համ վերքիլ կանի, որ իւր առուտրին հաբն տէսնու, չուրի ինքն Ըսպհանայ գայ։ Այս Ղուգազս եվ այս ջանիրէս ընկաւ այս բանիս մէջն։ Այս Ղուգազս Շմաւոնի կնգան փողն էր բանացանում։ Այս այսպէս էլաւ։ Աստուած փրկէ փորցանացի || Դարցեալ, ես 85v
Զաքարիայ ահա այս ժգ ամիս եղև, որ շատ շատ չարչարանք, շատ փորցանք, շատ տրտմութիւն, շատ կրակից եկաւ մեզ վերայ վասն իմ անպատմելի մեղացն։ Այս է. որ թվին ռճժբ նոյմբերի իբ-ին Ագուլիս որ ես Զաքարէս իմ անների տղայ Շահնազարն Ըստամբոլ այս ժէ ամիս էր, որ մեռած էր. այսպէս. որ գնում էր Ըստամբոլու Սև ծովու բօղազն, գայիշն շուր կուտայ. Բ ագուլեցի, Բ գայիշչի կնի. Բ ագուլեցին, գ

գայիղչին քնած կնի, մէկ գայիղչին՝ գարթուն։ Ղայիղն շուռ կտայ, գ հոգին քնած կու խէղդի ծովումն, մին գարթուն գայիղչին ապրի։ Այս Շահնազարին խաբարն նոյմբերի իբումն Ագուլիս տվին։ Այս եղև նախ և առաջ կսկիծ։ Գարցեալ յետ սորայ թվին ռճԺբ դեքտեմբերի իբումն Ըսպհանայ գիր եկաւ, թէ Շմաւոն գիր նաչաղութիւն քաշեց, ապա այժմուս լաւ է։ Յետ սորայ թվին ռճի յունվարի բումն Ագուլիս այս մասկոնի ելած մոլոր ախպէր Շմաւոնիս մահվան սև խաբարն եկաւ Ագուլիս։ Ես Զաքարէս զառն, տխուր գընացի Ըսպհան, ի Ջուղայ, այս ախպօր գերեզմանն տեսայ։ Եկի Ագուլիս, միայմօր մին աղչիկ ունէի տան, ժդ ամաց, եկի, թէ մեռած. սորայ գերեզմանն տեսայ։ Յետ այնորիկ գնացի Երևան, եկեղեցի Շմաւոնի տըրատում կինն, մոլոր երեխէքն տեսայ. մին աղայ. էլ նոր մեռած՝ գերեզմանն տեսայ։ Այս ամենայն եկն ի վերայ իմ վասն մեղաց իմոց։ Այս բանիս կատարումն եղև թվին ռճիա փետրվարի իումն Ագուլիս։

§ 59 Թվին ռճի մարտի եումն ես Զաքարիայ այսօր բուն 87v
բարէկենդան Ըսպհան, ի գիւղն Ջուղայ արարի։

Թվին ռճի մարտի ժաումն Ըսպհան շատ թամաշայ արարի. գերայ նավռուզ էր։ Շահն դուս եկաւ, փէշրաշն քաշեցին. ամէն խան շահին քաշեցին։

Թվին ռճի մարտի իբումն Ջուղայ որ Ջուղեցի ուստայ Յակոբջանն մեռաւ, սայ շահի դուրգար էր։ Շատ թոլու Ջրի հորեր կու շինէր։ Տարին ի թուման շահիցն զօնլուղ կուտէր։

Թվին ռճի ապրիլի իգ, մէհկի իա, ադամ դումն Ըսպհան, ի գիւղն Ջուղայ ես Զաքարիայ այսօր զաւիկ արարի։

§ 60 Թվին ռճի մայիսի իբումն Ըսպհանայ Ջուղայ մին 86v
Ոհան անուն չի վարդապետ Ջուղեցի, սայ քուրդացաւ, շատ զարար տվեց Ջուղու, ես առավել հավատի պակասութիւն։ Անունն եդին Շխ-Մումին։

Թվին ռճի յունիսի բումն Ըսպհան շահիցն ըռաքի

եկաւ, ես Զաքարիայ ինձ բռնեցին, բուխալեցին, տարան շահի ժէյլաղն, զերայ շահն ժէյլաղումն էր։ Մին հրեանցի գնաց, շահին արդ տվեց, թէ՝ զառաքի Սիամոնն մօտ այսչափ վոր ունիմ. Սիամոնի ախպօրիցն ուզում էմ, տալիս չէ. ուր որ գնում էմ, դիվանս առնում չէն։ Շահն ըռաքի կուտայ, բուրմիշ կանէ, թէ՝ դիվանբէկին հաղիղաթին հասնուս։ Այս ջանիբէս ես Զաքարէս գնացի Դէհիքուրտ ժեյլաղն. շահն տէղս էր։ Մինչի ժէ օրի ես ժուրդումս դիվան անէ, են ժուրդումն դիվան անէ, ախրն դիվան արաւ։ Ես Զաքարիայ մին քանի թուման խարջեցի, պրծայ. ամա շատ փորձանք քաշեցի, զերայ նաչաղ էի։ Նաչաղ գնացի, նաչաղ եկի Ըսպհան։ Այսմ ամի էր թագաւորն Շահ-Սէյլէման, էհտիմալ դօլաթն էր Շխալի խան, դիվան-բէկին էր Զանի խանի մեծ տղէն, անունն Աբասդուլի բէկ։ Ես Զաքարէս գնալ ու գալն մին ամիս քաշեց։ Իմ մեղացն է։

§ 61 Թվին ռճի յուլիսի ժգումն ես Զաքարիայ այսօր Ըսպհանայ դուս եկի։ 87v

Դարցեալ, ես Զաքարիայ յուլիսի ժբումն եկի Փաշան։

Թվին ռճի յուլիսի լումն վարդայվառ Հաջի-աղումն արարի։

Դարցեալ, յուլիսի լառումն այսօր Ըսպհանայ եկի Թարվեզ։

Դարցեալ, օգոստոսի էումն ես Զաքարիայ Թարվեզու դուս եկի։

Օգոստոսի թումն եկի Ագուլիս։

Թվին ռճի սեպտեմբերի ըումն Ագուլիս, օրն ուրբաթ, Ֆինն ժեումն Ֆինն խալարեցաւ առաջի իրիկունն, որ բռնելն մինչի բացվիլ ու պարզիլն գ սհաթ անցաւ, շատ խաւարակալաւ։ 88r

Թվին ռճի սեպտեմբերի իգումն ես Զաքարիայ այ-

աօր Ագուլաց շատ Ջումիաթով, գ կնիկ եկ, գնացինք[1]) Յոր Վիրաբն ուխտ։

Հոքտեմբերի առումն այսօր եկի Երևան, գնացի մեր եխպայր Շմաւոնի տունն, խիզանն տէսայ։ Զերայ Շմաւոն Ըսպհան մեռած էր, գնացի Ըսպհան, այսօր եկի Երևան։

Թվին ռճի նոյմբերի բուռն Երևան որ Սէֆիղուլի խանն իւր ապալարոնը, շատ մարդով գնացին Շահ-Սլէյման թագաւորի նազիր Մասղուդ բէկին փէշվազ, որ գնում էր Հաջ։ Ժբ օր կացաւ, գնաց Առզռում։ Յետքանի օրէն շահի մաշադալ-բաշին եկաւ Երևան, գնաց Հաջ։ Այսմ յամի դիր շատ մարդ գնաց Հաջ. դիր շատ գնացին։

§ 62 Թվին ռճիումն օսմանցու Սուլթան Մահամադ թագաւորն, իւր վէզիր Մահամադ փաշէն ասկարով գնան Լեհի վերայ մինչի Կամենից, Կամենիցու քաղաքն իւր երկրոնը առաւ. անթիւ զօրք գնաց։ 87r

* Թվին ռճիգ Սուլթան Մահամադ թագաւորն մին քանի ռ մարդով դուս կու լինի Բաբայդաղու յետ գնայ ինադով, կուտայ Մաջաուի սնօրնների քրիստոնեաքն ամէն գերի անէ, ոմն սուր քաշէ, ոմն գերի անէ, բէրի Ադրանայ։ Ասացին թէ ձռ ջան ծախվեցաւ, թողղ սուր քաշածն։ Այս պատճառ դրաւ, թէ՝ ուզում էն, որ զօնմիշ լինին, ես եկ այսպէս արարի։ Ապայ շատ հայ ու հռօմ, այլ ազգ, շատ բէրաւ տնով. ոմն Հուլուբայ, ոմն այլ տէղ Ուռումէլու, ոմն Ադրանայ, ոմն բէրաւ Ըստամբօլ, այսպես թէ քաղաք, թէ գիւղ բնակեցան, մնացին։

Թվին ռճիե ապրիլի Խումն Սուլթան Մահամադ թագաւորն եկաւ Ըստամբօլ։

Թվին ռճիէումն ապրիլ ամսոյն Ըստամ-

1) Ձեռագրում՝ գնացին։

բալու Սուլթան Մահամադ թագաւորն իւր վէզիր Մուստաֆայ փաշա դուս ելան անթիւ զօրօք, գնաց Ադրանիայ, մեծ սաֆար կանչեց Մսկովին վերայ։

** Ուր գնաց Լէհն. ազգ մի կայ, անունն Տրէչան, գնաց այս Տրէչանիս վերայ, որ այս ազգս առնէ, որ Մսկովու սահրատն է, առնէ, ապայ թէ գնայ Մսկովն։ Թէ Մսկով, թէ Լէհ, թէ Տրիչան այս տէպ կռիվ ովին, օսմանցոցանէ մին ճեռ մարդ ըսպանվեցաւ։ Մին դարդակ բէրթ առին, դարցան, ինչին Ատրանայ թէ թագաւոր, թէ զօրք։ Օսմանցիք այսպէս մնաց խայտառակ։

§63 Թվին ՌՃԻԱ յունվարի գ, ուրբ դ, արամ իբուն Երևան ես Զաքարիայ այսօր Ջրաւրհնիք Երևան արարի։ 88v

Թվին ռՃԻԱ փետրվարի գուն Երևան ես Զաքարիայ այսօր մեր Շմաւոնի խիզանն որ կնիկն, մին աղջիկ, անունն Սալլինազ, մին տղայ, անունն Ադամ, որ է Ադամիր, թէ նօքար, թէ բարեկամ, որ ժբ հոգի վեր առի, դուս եկի. փետրվարի ԺԱուն խիզանով եկինք Ադուլիս։ Թէ տուն, թէ մուլք, թէ աջհաս, թէ ամանդուզ, թէ խորակ, թէ շոր, թէ պղինձ, ամէնն թողաւ Երևան։ Միայն իւրենց բ դաստ հաքնելու շոր վեր կալանք, եկինք Ադուլիս։ Ամայ դիամաթ ցուրտ այ։

Թվին ռՃԻԱ ապրիլի է, մեհեկի գ, շամս ժբուն ես Զաքարիայ զատիկ այսօր Ադուլիս արարի։ Դարցեալ, այսմ տարի աշունքն մինչև Ջրաւրհնիքն ձուն չկեր։ Ենքան չիկաւ ձուն, որ գետինն ծածկէր։ Ապայ յենց չոր ցուրտ էր, որ շատ մարդ զարմայնայր, որ չէին տեսել։ Ապայ այսուչետև ոկսաւ կրկին ցուրտ անելն, ձուն գալն մինչև ապրիլի բուն։ Շատ անասուն չորքոտոնեանց կոտորուն եղև, շատ ճանապարհ, սարեր կապեցաւ։

§64 Թվին ռՃԻԱ յունիսի ԺգուՄն որ Երևանայ Սէֆիզուլի խանէն մարդ եկաւ այսօր Ադուլիս, ես Զաքարիայ, իմ քեռու տղայ Ղոգաղն տարան Երևան վասն մեր եխպայր Սիամոնի Ճ թումանու կարմունջի բաղուն համար։ Զերայ Շմաւոն ըռահտաբ էր, բաղի ունէր, մեք Շմաւոնի վեքիլ ինք, տարաւ, առաւ Ճ թուման, ինչպէս իւր դավտարուն գրած ենք։ Դարցեալ, օգոստոսի իբ եկինք Ադուլիս։ 89v

§ 65 Թվին ռճիա յուլիսի ժդ-ումն վարդավառ կիրակի 90v
օրն Երևան ի սուրբ Էջմիածինն Յակոբ կաթուղիկոսն
ժողով արար եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանա-
յից, աշխարհականաց, մինչի գ, դռ մարդ կէր, խանի
քարանաչի, շատ երկրի մարդ եկին, որ այսօր սուրբ
մէռոն աւրհնեցին։ Դարցեալ, Գանձասարու Պետրոս
կաթուղիկոսին գավազան իշխանութիւն տվեց, քանզի
կաթուղիկոսութիւն վարէր, ապայ օրէնք չէր. այժ-
մուս տվեց։ Շատ ուրախութիւն եղև. սիրով և յօժարու-
թեամբ գնաց Գանձասար։ Եւ Աքուլեցի Աղամիրի որդի
անարժան Զաքարէս ականատէս եղայ այսմ շնորհաց։
Դարցեալ, ես Զաքարիայ յետ Ե օրէն գնացի վերոյ
վանորայքն ուխտ։ Առաջ գնացի Ուշական, մեր հայոց
թարգմանիչ, գիւտ գրոց Մեսրոպի վարդապետի գերեզ-
մանն համբուրեցի։ Գնացի Մուղնու վանքն, սուրբ
Գէորգայ մասն համբուրեցի։ Սորայ առաջնորդն էր
մուղնեցի Դաւիթ վարդապետն։ Յետով գնացի սուրբ
Կարապետ Ոհանայ վանքն, Ոհանու մասի գերեզմանն
համբուրեցի[1]։ Սորայ առաջնորդն էր կարփեցի Ոհանէս
վարդապետն։ Դարցեալ, գնացի սուրբ Սարգսի վանքն,
սուրբ Սարգիսի մասի գերեզմանն համբուրեցի։ Սո-
րայ առաջնորդն էր երևանցի Ոսկան վարդապետն.
այժմուս գնացել էր վասն գրքեր բասմայ տալու, որ
այս ԺԱմ է Ֆռնգստան է։ Սորայ տէղապահն էր
երևանցի Պօղոս վարդապետն։ Աստուածաշունչն այս
Ոսկան վարդապետս հանեց բասմով, շատ շատ գրքէր
հանեց։ Հայոց կրկին թարգմանիչ էր սայ։ ‖ Դարցեալ 91r
գնացի Սաղմոսավանք, Լուսաւորչի խուր ձեռամբ շի-
նած խաչն համբուրեցի և այլ սրբոց գերեզման համ-
բուրեցի։ Դարցեալ, գնացի ձորի մրջի գետի վերայ
անապատն, որ Լուսաւորչի անապատ կոչէն։ Սաղմո-
սայվանքին առաջնորդն էր կարփեցի Գաբրիէլ վար-

---

1) Ձեռագրում՝ համուրեցի։

դապետն։ Լուսաւորչի անապատի հայրն էր խորմցի Տէր Սիմոն։ Եւ Զաքարիայ գ օր այս վանքերս ուխտ արարին։ Դարցեալ, յետոյ Եղվարթայ վերայ անց կացի, եկի Ղրխ-բուլաղն, զերայ Սէֆիղուլի խանն եկել էր էյլախ։ Եւ Զաքարեայ խանիցն ըռաղաթ առի, եկի Երևան, բէրթն։ Դարցեալ, օգոստոսի ԺԵՌԻՆ ես Զաքարէս, իմ քեռու տղայ Ղօզազն այսօր Երևանայ դուս եկինք, եկինք այսօր Խօր Վիրաբն։ Գալ օրն գալսվուկ բռնեցինք, գնացինք Ակուռի, սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետի աղբիւրն, ուխտ արարաք, այլի այսօր եկինք ի Վիրաբն։ Ամայ գնալ ու գալն ԺԳ աղաջ կայ. դժվար ճանապարհ է։ Դարցեալ, օգոստոսի ԺԸՌԻՆ աստուածածին ի սուրբ Վիրաբն արարինք։ Օգոստոսի ԻՌԻՆ Վիրաբէն դուս եկինք, օգոստոսի ԻԲՌԻՆ եկինք Ագուլիս Աստուծով. այս է։

Մին գրգում տէսայ, թէ թվին ռղառուն փոքր Շահաբաս Ըսպհան թախտ նստաւ թագաւոր։ Սայ գրուստ հայոց թագաւոր էր։

§ 66 Թվին ռճիա օգոստոսի ԺԸՌԻՆ որ Ագուլաց ԺԳ մարդ 90r
եկաւ Երևան, որ մինչի ի օր բան անեն բերթի պարիսպի վերայ, որ միայն Աքուլիս ԲՃԿ մարդ են գձել։ Դիվանի ի օր բան արին, գնացին։ Մարդայգլուխ օրն Կ դիան առանց հաց դիվանի տվին, ավելն աքուլեցիք վարար քաշեցին։

§ 67 Թվին ռճիա սեպտեմբերի մէկուն Աքուլիս ես Զա- 91v
քարիայ մեր եխպայր Շմաւոնի երևանցի կնիկն ու տղէն, աղչիկ աբաշխարոդն Ջումիաթով տարայ Տրունաց սուրբ Խաչն, ուխտ արարին, եկին Աքուլիս։

Թվին ռճիա սեպտեմբերի ԸՌԻՆ Աքուլիս ես Զաքարեայ իմ եխպայր Շմաւոնի խիղանն, երևանցի կընիկն, տղէն, աղչիկ աբաշխարոդն Ջումիաթով տարայ Աքուլաց Սահրի Աստուածածինն, ուխտ արարին, եկին Աքուլիս, տունն։

Թվին ռճիա հոքտեմբերի ԺառԻՆ Աքուլիս ես Զա-

քարեայ որ իմ եխպայր Շմաւոն երևանցի կնիկն, տը-
ղէն, աղջիկն աբաշխարողն շատ ջումիաթով գնացինք
Նախավկայն, ուխտ արարաք։ Սորայ առաջնորդն էր
շամբեցի Մուքել վարդապետն։ Ե օրէն գնացինք,
եկինք Աքուլիս։

Թվին ռճիա դէքտեմբերի իբ։ումն ես Զաքարեայ
մեր եխպայր Շմաւոնի երևանցի կնիկն ու քեռի Ղա-
գաղն, Պետրոս վարդապետն գնացինք Նախավկայն,
որ Յակոբ կաթուղիկոսն եկեալ էր Նախավկայն վասն
լուր պարտքին ջանիբէ։ Ամէն երկրի մարդ էր եկել Գոխ-
թան տանէն. կաթուղիկոսին պարտքի ջուղաբ արին,
վասն շատ պարտք ունէր։ Զերայ Ըստամբօլու մարդ
էր եկել || թէ՝ կաթուղիկոսն իդռ մառչիլ Մահմուդ 92r
աղային տալու այ, տվէք։ Ջումիաթ ջուղաբ արին,
թէ չունքի կաթուղիկոսն Օսմանցու երկրէն սրգուն
են արել, պարտքն Օսմանցու երկրին հայերքն տայ։
Այս պատճառէն կաթուղիկոսն առան, տարան Երևան։
Մեք, Զաքարէս, Շմաւոնի կնիկն գնացաք կաթուղի-
կոսն մօտ. մեք ել բ, գճ թուման կուղէինք կաթու-
ղիկոսէն. բալքի թէ մին քանի թուման առնինք։ Տե-
սանք այսպէս աղմուկ, մեք ել բաց թողինք, եկինք
Աքուլիս։

L* Դարցեալ, թվին ռճիբ ապրիլի մէկ, Երե-
ւանայ Սէֆիղուլի խանէն մարդ եկաւ, ա-
նունն Բայքայուղ-բէկ, Յակոբ կաթուղի-
կոսի տեղակալ Սհակ վարդապետն, Նախչի-
վանայ քալանթարն որ ամէն ղ ձիաւոր
էին։ Շահի, խանի յօքմով եկին Աքուլիս,
թէ՝ ռ թուման դուք տվէք։ Կաշառք տալ,
գեղ վեր կենալ, մին գիշերի ղե մարդ կա-
խեց, շատ անհամութիւն, վերջն՝ Աքուլիս,
Դաշտն, Վանքն ամենեցուն գճճ թուման
դուս էլաւ։ Ոչ թէ միայն Աքուլիս, ամէն
երկրէ առին, որ մինչի բռ թուման կիտեց։

Ապայ խանն փողն տվեց ոչ կաթուղիկոսն։ Այս պատճառէս խանն, կաթուղիկոսն մէկ մէկի յետ հակառակ ընկան, շատ աղմուկ էլաւ, կաթուղիկոսն ծածուկ փախաւ, գնաց Ըսպահան։

§ 68 Դարձեալ, թվին ռճիբ մայիսի ԺԷումն ibid.
որ Յակոբ կաթուղիկոսն Երևանայ փախաւ, գնաց շահն, որ էր Ղազվին։

§ 69 Դարձեալ, խանն էլ տեսաւ, որ կաթուղի- ibid.
կոսն փախաւ, խանն հակառակ ընկաւ կա-
թուղիկոսին։ Խանն շահին արզ արեց, թէ՝ այս փողս սիթամով առի, շահն հրաման տայ, որ այլի փողն փողայտէրն դարցու-
յանեմ։ Շահն հրաման կուտայ։ Դարցեալ, թվին ռճիգ ապրիլի Ժումն խանից մարդ դայ, թէ՝ դիրն բերէք, ձեր փողն առէք։ Վարդապետն, մելիք, մարդ գնաց, այսպէս տվին. որ միայն Աքուլայց ճիրը թուման առէլ ին, ղը թուման կէս դուս եկաւ։ Թէ դրով, թէ այնգիր, այս դուս եկաւ։ Ամէն մարդ իւր տվածին գորայ ըռասաթ վեր առին, խարջն դուս ընգաւ, մին թումանին զռգճ դիան ձեռն եկաւ։

§ 70 Թվին ռճի և մէկումն Աքուլիս էր Աղլրէջանայ վէ- 89r
գիր Միրզայ Իբրահիմի զաֆտումն։ Այսմ ամի էր Աքուլայց դարուղէն Միրզայ Իբրահիմի զուլ Բահրամ-բէկն. ժդ ձիաւորաւ օրն ըռ դիան խարջ ունէր։ Ամ օր կացաւ, կ թուման փող տարաւ, թողզ խարջն։ Սորայ շատ կենալն, շատ փող տանելն պատճառն՝ էլ աքուլեցի Մուսաբէկի տղերքն եկաւ։ Զերայ շահի յօքմով Զունուզու սուլթանն գճ ձիաւորաւ եկաւ Աքուլիս, Ավզուլայ բէկն բռնեց, մին ծե մարդ գունդեց, տարաւ Զունուզ, որ շահի յօքմով գնան Ըսպահան դիւվան։ Դարցեալ, այսմ ամի էր Աքուլայց մէլիքն էր

Քուրդունց Սարգավաքի որդի Ալէքսանն։ Այս պատճառէս որ սուլթանն, Միրզայ Իբրահիմի մին մարդ, անունն Էյնալի աղայ, սոքայ մին Ի օր Աքուլիս կացան, մին Ծ, Կ թուման Աքուլաց հայերն զարար քաշեցին, բալքի ԲՑ թուման մօտ Աքուլաց թուրքերն զարար քաշեցին։ Զերայ շատ մարդ բռնեցին, շատ տուն կոխեցին, թէ՝ Ավդուլէն ձեր տան այ կամ դուխաբար էս։ Այսպէս էլաւ։

* Այս Ավդուլէս Զունուզ այնչափ պահեցին բուխավում, մինչի թվին ռՑԻԲ սեպտեմբերի մէկն միայն Ավդուլէն դուցալ տարան Ըսպհան, որ դիվան անէն։ Մնացին այսպէս, վերջն բարիշեցին։ Այս Մուսայբէկի տղայ Իսախանս Ըսպհան մնաց, մինչի թվին ռՑԻԴ գնաց, շահին արզ արեց։ Շահի հարամիցն մին զարավաշ տվին Իսախանի տղայ Մուսաբէկն. Ե խաս զէղն, որ է Աքուլիս, Մէղրի, Շօռութ, Ազտապատ, Լէհրամ, տվին Իսախանին զաֆտն։

Թվին ռՑԻԴ հոքտեմբերի ԻԳումն այսօր Աքուլիս շահի յօքմի սավաթն կարդացին[1]), էլաւ սոցայ, մինչի փետրվարի Ե Մուսաբէկի ԲԹռուն, Ավդուլէն, Մուսաբէկն[2]) եկին Աքուլիս, ԺԵ օր կացին, գնացին Գանջայ, խանին խալաթ տարան, ապրիլի ԻԲ եկին Աքուլիս, խասէրն զաֆտ անում. այս է։

Թվին ռՑԻԱ Շահ-Սէյման թագաւորէն ըռազամ

§ 71 եկաւ Երևան Սէֆիղուլի խանին վերայ, մի մարդ 89v
եկաւ Ըսպհանայ, թէ՝ Երևանայ բէրթի յարևելյան կողմն մին պարիսպ էլ քաշեն. Բ պարիսպ ունէր, էլաւ գ։ Միայն յարևելյան կողմն քաշեցին։ Դարցեալ,

---

1) Ձեռագրում՝ կրցին։
2) » Մուսաբէկին։

ամէն երկիր մշակ[1]) գձեցին Ջամի գօրայ, ամէն վարցն Թագաւորական տվին։ Ամայ առանց հաց կ դիան տվին վարցն։ Երկիր կէր, որ 6 դիան, 60 դիան բռնեցին։ Ավել զարարն ամէն երկիր քաշեցին։ Թագաւորէն մին ռեճկ Թուման փող ըռազամ եկաւ Երևան Զորագէպ ոմն հայ խօջայ Սարգիսի վերայ, թէ՝ դավտարով փողն խարջէ, հաբն տայ. զ, է Թուրք, հայ ժաղիչի կէր, որ գրում էն։ Այսպէս ես Աքուլեցի Թուրդունց Ադամիրի որդի Զաքարէս Երևան տէսայ, այս պարիսպս քաշեցին, այսմ յամի մինչի կէսն բարցրացաւ, մնացածն մնաց գալ տարին։

---

1) Զեռագրում՝ շմակ։

§72 Թվին ՌՃԻԲ յունվարի գ, սրամ ԻԲ, տրէ Ե, օրն 92v
բշաբթի, ես Զաքարեայ այսօր Ջրաւրհնիք Աքուլիս
արարի։ Օրն պարզ, ինչպէս գարուն։ Մինչեի այսօր
ջուր սհալ սառեց. լալ հավայ։ Ջրաւրհնեաց ը օր
անցաւ, ապայ սկսաւ ձուն գալ ու պինդ ցուրտ անել։
Ամէն թանգացաւ, սղութիւն անգաւ, որ ալուրն ծ
խատիլն, որ է մին լիդր, բճծ դիան գարցաւ, երինձն՝
բճծ դիան, միսն՝ բճ դիան, գարին՝ բճ դիան։ Նորու
վերայ գարցաւ ալուրն դճ դիան։

§73 Թվին ռճիբ յունվար ամսոյն ըսկըսաւ սղութիւն 9r
հացի մինչեի յուլիս ամիսն, որ նոր ցորեանն դուս
եկաւ. ոչ թէ միայն Գողթայն տունս, այլ ամենայն
երկիրս այսպէս. Թարվեղու մինչի Երևան, Զորսու
մինչի Գանջայ, ես առաւել Գողթան տունս, քանզի
անցեալ տարոյն երաշտութիւն եղև։ Դարցեալ, Երևա-
նայ խանն իւր երկիրն դադարայ արաւ, Նախչիվա-
նայ խանն, Զորսու խանն, Թարվեղու խանն, ամէնն
իւրենց երկիրն դադարայ արին, որ այս Գողթան
տունս ուտելիք չեկաւ։ Աքուլիս ծ խատիլն մէկ լիդր
էր, մէկ լիդր ալիւրն դ, ճ դիան, երինձն դճ դիան,
միսն բճ դիան. ոչ թէ գինն ավելի էր, ապա լիդրն
ռ դիան կայր ոչ։ Աքուլիս հենց աղքատ լցաւ, որ
մարդ դրին, դուս արարին։ Աքուլայց կշտին Վանան-
դու ջաղացն, Տրունայց ջաղացն, Ագուլայց վանքի
ջաղացն գիշերն բ, գ անգամ կոխեցին, մարդիքն կա-
պեցին, ալիւր տարան։ Կարիլ չէին մինակ ջաղայ
գնալ կամ գիշերն մնալ ջաղացն։ Շատ մարդ բանջա-
ռով ապրէր, շատ մշակ առանց վարցի բան կանէր։
Դարցեալ, այսպէս դ ամիս մնաց, մինչև որ նորն դուս
եկաւ Աստուծոյ ավածին խիստ բոլ, որ ցորէնն դար-

յաւ ձ դիան օգոստոս ամսոյն։ Այսմ ամի Աքուլայ գեան մինչի վարդավառն Բ, Գ ջաղացի առու ջուր եկաւ. խիստ բոլ էր, պարզ, իստակ։ Ըստեղծողին փառք և գոհութիւն։

§ 74 Թւին ռճիբ փետրվարի թուին Աքուլիս ես Զաքարեայ բարէկենդան արարի։ Գինու լիդրն ճ դիան էր. այս է։ 92v

§ 75 ՝ Թվին ռճիբ մարտի ժբուին Աքուլիս ես Փրդունց մղդսի Ադամիրի որդի Զաքարէս, որ իմ եխպայր Շմաւոնի որդոցն յետ բաժանվեցայ, թէ տուն, թէ այքի, թէ աչհաս, ես Զաքարիս յիսէն այս է. իմ հայրենի տունն ու հայրենի այգին, Բ ժամ ջուր Սնասաց կհաւին վերայ. դարցեալ, մեր դռան դէմ Շօղլինց բաղչին, Ը գաղ ձիգան, Ե գաղ լենքսն, այս ել ես Զաքարիայ իմ յիսին վերայ։ Ինձ Զաքարիս պղինձ ընգաւ մին մեծ դաղան, որ է ծ հողայ, մին երաղի դաղան, որ է իե հողայ ԲԲ[1])։ Թէ դաղան, թէ բաղեայ, մարդարայ, նալբաքի, լագան, ջամն էլաւ ղե ճոթ, ամայ ֆանար, ղումղումայ, թէ ղալիայ նալբաքով ամէնն ղե ճոթ այ. քաշոմն եկաւ ձԲ հողայ, որ Բ դաղանին յետ ջամն ղէ ճոթ, քաշն ճծԲ հողայ։ Դարցեալ, շորէղէնն, ինչպէս ես վեր առի, նոյնպէս Սիամոնի կնիկն, որդիքն վեր առին։ Ամայ մին լաւ սրմայ թամբ ըռախտոմն, դիկդիկով, արծաթէ ըռախտոմն Սիամոնի վարիսն վեր առին, Ե թուման։ Ես Զաքարէս վեր առի մին խալի՝ Էռ դիան, մին կանաֆէտ՝ գինն դռ դիան, մին քուրսու լիսէր՝ գինն՝ Եռ դիան, մին քուրսու ջէջիմ՝ Եռ դիան, մին բոյրու թվանդ՝ Բռ դիան, մին դէղին ֆանար՝ Բռ դիան, մին շամդան՝ ռ դիան, մին ֆնթայ՝ ռ դիան, մին թամբի 85v

---

1) Կարելի յե վերծանել Բ թուման։ Տպագիրը (յերես 49) ունի ԲԲ առանց «պատվի», իսկ փակագծի մեջ հարցականով գրում է՝ «29 թումանի?», որ միանգամայն անհիմն եւ

թաքալթու՝ ու գիան, որ ջամն էլալ իբու գիան. մարդին Սիամոնի որդոցն բաշխեցի ԲԲ[1]), մին արծաթ ըռախտ՝ գինն մին թուժան, այս էլ Սիամոնի որդոցն բաշխեցի։ Դարցեալ, արծաթէղէնն այս է. մին գուլաւդան, Բ փարչ, մին բուխրդան, Բ բարակ թափշի, մին ջամ, մին գահվադան, մին գինու թաս, մին կուլայ, մին պումպ քաշելու. ջամն ժա ճոթ, քաշն ամէն ութ դրամ։ Մին մեծ, մին պզտիկ գանթար ես Զաքարէս վեր առի՝ գինն դու գիան։ Ես Բ գանթարիս թանխէն Սիամոնի որդիքն վեր առին մին բիրարի ջաղաց՝ գինն դու գիան։ Ես Զաքարեայ իմ յիսէն այս ե։ Ահա նոցա յիսէն, որ-զարշու գրած է։

Թվին ռճիբ մարտի ժբուն Աքուլիս ես Քրդունց մղդի Ապամիրի որդի Զաքարէս որ իմ եխպայր Շմաւոնի որդոցն յետ բաժանվեցայ, ես Զաքարիս յիսէն այս զարշու թղտուն գրէլ ամ։ Այս է Շմաւոնի որդիք Գրիգորի, Ապամջանի, Սալվինազի, իւրէնց մայր Գուլումին յիսէն. մեր հայրենի տան զարշու, որ է փոքրակի են կողմն, տնեարն, որ է իե գազ ձիկան, իբ գազ լէնքան. յին տնեարն, նաշխուն օթախ ու բաղչէն. դարցեալ, Սնասեց կհաւին ես Զաքարիայ իմ այքու զարշու այքին, որ ծով ու ընձան, թէ որթ, թէ ծառ, թէ տնգութք ամէն ես Զաքարեայ նոր տնլեցի, նոր շինեցի, շատ չարչարանք քաշեցի այս այքուս վերայ ե տարի, որ մինչի քու մշակ բանացրի, Բ ժամ Սնասեց կհաւին ջուր վերայ. այքին այս է։ Ու մեր փոքրակի կշտի գեռուն մին ջաղացայտեղ տնգութք շինեցի, որ մինչի ժ թուման վերայ խարջեցի, ԵԺ տնգի տնգեցի, այս ել սոցայ յիսին վրայ։ Մին խարաբայ տնգութք վերի գեռ, այս ել սոցա յիսին վերայ։ Դար-

---

1) Կարելի է վերծանել նոյնպես Բ բուման։ Տպագիրը (յերես 49) գարձյալ ունի ԲԲ առանց «պատվի», իսկ փակագծում հարցականով «2 թուման?»։

ցնալ, ինչպէս որ ես շորեղէն, պղնձեղէն վեր կալայ, նոյնպէս էլ տվի տոցայ։ Շմաւոնի գաւակն Աքուլայ կնոջէն մին տղայ Գրիգորն է. Երևանայ կնոջէն՝ Ադամիրն, որ է Ադամջանն, աղջիկ՝ Սալվինազն. այս է։ Այս Շմաւոնի կին Գուլումս Աքուլիս կացաւ ոչ. տղայ Ադամջանն, աղջիկ Սալվինազն առաւ, բազի զատէն վեր կալաւ, գնաց Երևան թվին ռճիբ ապրիլի ԺԷ-ումն, այս Գրիգորս մնաց Աքուլիս։ Տեսնուք, թէ վերջն Աստուած բարին աջողէ, ամէն։

§76 Թվին ռճիբ մարտի ն յարաց իբ, շամս ԺՈՒՄն Աքուլիս ես Զաքարեայ այսօր դառն, տրտում զատիկ արարի։ Քանզի ես Զաքարեայ իմ նամուրատ կողակից ԲԷգումն ավաք ուրբաթ օրն առ Աստուած կոչեցաւ։ Ուրբաթի զ սնաթին հոգին աւանդեաց, ժ սնաթի, նշան թաղմանն, Քրիստոսի թաղման օրն թաղեցաք։ Տէօղին փառք և գոհութիւն։ 92v

§77 Թվին ռճիբ ապրիլի ԺԷումն Աքուլիս այսօր ես Զաքարեայ իմ եկեղայր Շմաւոնի կին Գուլումն, որդի Ադամիրն, որ է Ադամջան, դուստր Սալվինազն իւրենց հօքար ու ապախնովն գնացին Երևան։ Քանզի այս ԺԴ ամիս էր, որ Երևանայ բերի Աքուլիս, թէ կէնան, խօվ կացին ոչ։ Քանզի այս Սիամոնս վերատին կին էր առած Երևանայ, Սիամոն մեռած էր, բերի, թէ Աքուլիս կենան, կացին ոչ։ Ես Զաքարէս ասի. երի որ կենում չէք, եկէք, թէ տուն, թէ այքի, թէ աջհաս, թէ շոր, թէ պղինձ[1]), թէ արծաթ, ինչ որ կայ, բաժանէցէք, ձեր յիսէն տարէք, պահէք, կամ ուէք Գրիգորն պահի. ինչպէս գիտէք, այնպէս արարէք։ Գրիգորն էլ Սիամոնի տղէն այ Աքուլայց կնոջէն։ Այսպես դարուլ արարին։ Ղազի բերի, ամէն յիսէն ջոկեցի, գիր գրեցի, վարդապետ, դօվլաթաւորք մէջ բերի, բաժանեցաք. ամէն մարդ իւր յիսին տէր կե-

1) Ձեռագրում՝ պղին։

նայ, շինէ, քակէ, ծախէ, պահէ։ Ես Զաքարէս, Սիամոն Բ եխպայրք էինք։ Ամէն բան տեսան, այսօր գնացին Երևան։

§ 78 Թվին ռճիբ ապրիլի իառւմն Աքուլիս այնպէս ձուն եկաւ, որ Բ թիզ ձուն նստաւ։ Ապայ շատ ծառի ճուղ կոտրվեցաւ, շատ ծառ տակէն հանեցաւ, քանզի ծառերն ամէն տերևն բացված էր։ Այս ձունս Ագուլաց մինչի Նախչիվան եկաւ։ Շատ զարար Աքուլաց եկաւ։ Այս եղև վասն մեղաց մերոց։ 92v

§ 79 Թվին ռճիբ մայիսի իումն Աքուլիս որ Երևանայ Սէֆիղուլի խանէն Բ ձիաւոր եկաւ, թէ՝ Յակոբ կաթուղիկոսն փախել այ, խանն ամէն տէղաց վարդապետներն բերել այ, պիտի Աքուլաց վանքի Պետրոս վարդապետն ել գայ, որ Երևանցի Օնոփրիոս վարդապետն կաթուղիկոսն աւրհնեն։ Ապա Պետրոս վարդապետն, որ՝ սուտ է, Օնոփրիոս վարդապետն կաշառք ասել խանին։ Այս պատճառէս Պետրոս վարդապետն երես չեկաւ, փախաւ։ Մին Բ թուման տվի եկողին, գնաց։ Դարցեալ, վերստին յունիսի ժումն ել Երևանայ խանէն դ ձիաւոր եկաւ, թէ՝ Պետրոս վարդապետն գայ։ Խօվ տան չէր։ դ, Ե օրի կացաւ, Բ, գ թուման առաւ, գնաց։ Ամայ Պետրոս վարդապետն մին Բ ամիս փախստական կացաւ Ղափանումն ու Թարվեղ։ Մին ժ, ժԵ թուման գնաց, ապայ Երևան չի գնաց, քանզի աղմուկ շատ լինէր։ Այս չի Օնոփրիոսըս շատ զարար տվեց էջմիածնայ ու վարդապետաց, թէ՝ ես լինիմ աթառակալ։ Ծածուկ կասէր, թէ՝ կաթուղիկոս լինեմ։ Ես Զաքարէս գրեցի։ 93v

Թվին ռճիբ յունիսի իեռւմն Ապրբէջանայ վէզիր Միրզայ Իբրահիմին մին զուլ, ապայ մեծ ապայ է, քանզի առվածի[1]) է, անունն Բահրամ-բէկ, ժ ձիաւորաւ զարուզայ եկաւ։ Օրն գա դիան խարջ ունէր։ Մին

---

1) Թերես կարելի է նաև առվածի կարդալ։

ամիս կացաւ, գնաց միուս խաս գէղորայքն. ամէն վէղիրին զաֆտու�էր։ Դարցեալ, այսմ ամի Աքուլաց մէլիքն Բ էլաւ։ Զերայ Ներքի թաղն Քրդունց Ալէքսանն ուղեցին, գեռի ես կողմս, որ է Վերի թաղ, սոքայ Ավին ուղեցին[1]) Ոսկանի տղայ. անունն Ովանէս է, Օվի կասին։ Այսպէս Բ բաժանեցան, շատ աղմուկ լինէր մէջն։ Ես Զաքարեայ գրեցի։ Այսմ ամի դռեճ դիան մալ տվինք։

§ 80 Հ Թվին ռճիբ յուլիսի մէկուսն Աքուլիս այսօր Երևան Սէֆիղուլի խանին մարդն ու մին շահի դուլ ժ ձիաւոր, շահի, խանի յօքմով եկին Աղուլաց ու Դաշտէն էճծ մարդ ուղեցին, Երևանայ բերդի կիսատն շինեն, ինչպէս անցեալ տարին։ Լէ մարդ գնաց, որ մինչի էճծ մշակ բան անէ։ Աքուլիս ու Դաշտն այս լէ մարդիս մարդագլուխ դռ դիան տվին։ Թէ շահի փողէն էլ տան, բարի, թէ չի տան, խօվ այս է, որ տվին։ Աքուլիս Ե օր կացին, մշակն առան, գնացին։ 90r

* Պարիսպն գլուխ հասուցին, ամէն մարդ գնացին իւրեանց տէղն։ Թվին ռճիգուսն վերջ եղաւ։

§ 81 Թվին ռճիբ յուլիսի գուսն ես Զաքարեայ այսօր վարդայվառ Աքուլիս արարի Աստուծով։ 93r

§ 82 Թվին ռճիբ դէքտեմբերի իգուսն Աքուլիս ես Զաքարեայ գնացի Երևան մեր եպսպայր Սիամոնի տունն, կինն ու որդիքն տեսայ, յունվարի իբուսն Երևանայ այլվի գուս եկի, յունվարի իէուսն եկի Աքուլիս Աստուծով։ 94r

---

1) Զեռագրում՝ ուզեցի։

Թվին ՌՃԻԳ յունվարի գ, տրէի Ե, արամ ԻԲ, օրն գշաբաթ, ես Զաքարեայ այսօր Ջրաւրհնիք Երևան արի։ Այսպէս էլաւ. առաջ որ Յակոբ կաթուղիկոսն Սէֆիղուլի խանի տէն փախաւ, գնաց Ըսպհան, երևանցի Օնոփրիոս վարդապետն գնաց, խանին կաշառք կուտայ, թէ՝ մարդ աղարկէ, երկրի վարդապետն գան, ինձ աթոռակալ դնէն։ Խանն մարդ աղարկեց, ինչպէս առաջն յիշեցաք։ Դարցեալ, որ Ջրաւրհնիքն մօտացաւ, այս Օնոփրիոսըս գնայ խանին կաշառք կասի, թէ՝ երկրի մարդ, վարդապետք ամէն գան, որ ես հրաշալի Ջուր աւրհնէք անեմ։ Խան ել դաստուր կուտայ։ Ամէն երկրի մարդ, թէ վարդապետ կուգան, խանին արդայ կուտան, թէ՝ Օնոփրիոսն Ջրաւրհնիք անէ, ամէն մեք ոչ մէկս գալ չեմ։ Խանն կասի՝ ի՞նչ պատճառի։ Քուլի Երևանայ, ամէն տէղաց մարդն, վարդապետն կասին, թէ՝ մեր կաթուղիկոսն Օնոփրիոսն անիծել այ։ Խանն կասի՝ ապա դուք ո՞վ կուզէք։ Կասին՝ շամբեցի Մուքել վարդապետն. այս քանի անգամ սայ աթոռակալութիւն է վարել։ Խան ել դարձուլ կանէ։ Խանն կասի՝ սայ ել մին վարդապետայ նման մին վարդապետ։ Ես յետ Ջումուաթ խանի խօսքն վեր չէն ձգել, կասին[1]) գայ, ամայ մեռոնն Մուքել վարդապետն Ջուր ձգէ։ Դարցեալ, չունքի ամէն երկրի վարդապետ, մարդ եկին, ասաւ խան, թէ՝ լաւ Ջրաւրհնիք բռնէք, որ Բ խան կայ, տէղս բերեմ, մինն Նախջիվանայ, մինն Բարդուս։ Դարցեալ, մինչի Բճ մարդ շապիք ի՞ն հաքել. լաւ հրա-

---

1) Ձեռագրում՝ կասի։

շալի[1]), ամայ առօտայ բռնեց ձուն գալն մինչի յետի ժամն։ Շատ զգեստ զայ էլաւ։ Եւ Զաքարեայ գրեցի։ Յին քապաքի Ռ երեսունն զգեստավորեցին։

§ 83 Թվին ռճիզ մարտի ժեռւմն ըսկսաւ սաստիկ ձուն գալն ու ցուրտ անել մինչի մարտի իառւմն. վասն մեղայ մեղոց։ 95r

§ 84 Թվին ռճիզ մարտ ամսոյ Շահ-Սլէյման թագաւորն Ըսպհան դուս եկաւ, արեկ Ղազբին, քանզի սայ քանի թագաւորեալ էր, Ըսպհանայ դուս չեր եկեալ։ Եկաւ Ղազբին, ամառս կացաւ, թէ գնայ[2]) Սուլթանիայ իւր զօրքին համար առնելոյ. ibid.

* Սուլթանիայ գալն խափանվեցաւ, մնաց Ղազբին, մինչի թվին ռճիզ սեպտեմբերի ամսոյն Ղազբինայ զօրքն դուս էլաւ, թէհրանայ վրա գնաց Աշրաֆն, թվին ռճիե յուլիսի ամսոյն եկաւ Ըսպհան։

§ 85 Թվին ռճիզ ապրիլի ժբ, շամշ ը, մէհէկի ժբռւմն Աքուլիս ես Զաքարեայ պատիկ արարի։ Էի և առաւ. ալիւրն ձ դիան, գինին կ դիան, միսն գճ դիան, բրինձն ճծ դիան։ ibid.

Թվին ռճիզ յունիսի իզռւմն օրն դշաբթի, այսօր Ադրբէջանայ վեզիր Միրզայ Իբրահիմէն մին դարուղայ, անունն Բէհզատ-բէկ, ժ ձիաւորաւ եկաւ Աքուլիս։ Օրն գռ դիան խարջ ունէր։ Թէ առաջ, թէ յետ, թէ Աքուլիս, թէ Դաշտռւմն բ ամիս կացաւ, թէ Աքուլայց, թէ Դաշտէն ձ թուման տարաւ, թէ նաղտ, թէ ջնս, թէ ղուլուղ, թէ ահտազ. այս է։

§ 86 Թվին ռճիզ յուլիսի թռւմն, օրն եշաբթի, որ Ղազվինու Շահ-Սլէման թագաւորէն չափար եկաւ Գանջայ, այժմուս շահն Ղազվին էր։ Դարցեալ, Ադրբէջա- 96r

---

1) Զեռագրում՝ հրաւաքի։

2) Զեռագրում առաջ գրված է յեղել՝ եկաւ, հետո հեղինակն այլ թանաքով այս բառը ջնջել է և վրան ուղղել՝ կացաւ. թէ գնայ։

նայ վեզիր Միրզայ Իբրահիմն Գանջայ էր։ Այս չափաը, անուն Սարուխան-բէկս, կու գայ Գանջայ, վէզիրն վեր ունի չափարով, շահի յօքմով, այսօր որ յուլիսի թումն գայ Երևանայ յեյլաղն, որ այ Ղրխ-բուլաղն։ Սէֆիղուլի խանն տեղս կու լինի. ասկարով եկել ին էյլախ։ Այս Սարուխան-բէկս ու վէզիր Միրզայ Իբրահիմս շահի յօքմով խանն բռնէն, ամէն ապրանքն մհրէն, խանն բուխավէն, ասկարով բերէն Երևանայ բէրթն, դուցալ անէն, շահին արդ անէն, բռաղամ գայ, այս Սարուխան-բէկս Երևան խանի ջայնշին նստի. վէզիրն խանի ամէն ապրանք, դավտար մհրէն, մինչի մին ամիս խանն պահէն, յետ ամսոյն բուխավէն, մին ի թվանդչի դնեն յետն, զրկէն շահն։ Շահն երես չի տարաւ, հրաման արաւ, թէ՝ տարէք, դրէք Ղազվինու ը օրէն դէնն ֆլան բերթում։ Խանին ը մեծ տղայ ել շահի ղուլուղոամ էր լաւ առաջ, մեծի անուն Նազարալի-բէկ, պզտիկ տղի անուն Մէհրալի-բէկ։ Դարցեալ, քանց խանի բռնելն առաջ՝ շահն Նազարալի-բէկի մին ձեռն կտրել կու տայ, զրկի Երևան խանին։ Դարցեալ, խանն ու իւր տղայ Մեհրալի-բէկն դնի բէրթումն, օրն եւ դիան խորակ տայ։ Դարցեալ, վեզիրն մինչի հոքտեմբերի ը ապրանք գրեց ու հարամն ապայ հոքտեմբերի ը զրկեց շահն, շահն երես չի թողեց, երեսէն քշեց։ Դարցեալ, այս վէզիրս խանի ‖ ապրանքն գրեց, դճ ուղտ բարցեաւ, աղարկեց 96v
շահն, թէ ոսկի, թէ արծաթ, թէ պղինձ, թէ խալի, թէ չադր, թէ ձի, թէ ուղտ, թէ լաւ, թէ վատ, թէ նազտ, թէ վէջ, ու թումանի ապրանք դավտար արաւ, բարցաւ, մին ճ ձիաւոր դրաւ յետն, բռնված խանի նազիր Իսախանբէկն դնի յետն, փետրվարի ժումն Երևան դուս ղարկեց։ Այս վէզիրս մնաց Երևան, մինչի թվին ռճիգ ապրիլի խումն Երևանայ դուս էլաւ, գնաց Գանջայ իւր բանն։ Դէռ ևս խան չէր եկած։

* Թվին ռճիգ հոքտեմբերի ժեռումն շահն

Ղազվին Երևանայ խանութիւն կու տայ մեծ Ռուսաստամ խանի տղայ Սէֆիղուլի-բէկն. այսօր այս Սէֆիղուլի-բէկի տղայ Ռուսաստամ-բէկն մտաւ Երևանայ բէրթն, նստաւ հօրն Ջայնիշին, մինչև հայրն գայ։

Դարցեալ, թվին ռճիդ[1]) նոյմբերի ն, օրն գշաբաթ, այսօր մեծ Ռուսաստամ խանի տղայ Սէֆիղուլի խանն մտաւ Երևան փառօք, շահի հրամանաւ խան եկաւ։ Առաջի Ջայնիշին Սարուխան-բէկն գնաց Ըսպհան իւր բանն։

§ 87 Թվին ռճիգ օգոստոսի ժբու�Երևանայ գ ձիաւոր եկաւ, թէ Սիամոնի եխպայր Զաքարէն ու Սիամոնի որդի Գրիգորն գայ Երևան, որ Սիամոնին գավիչի այ դուս եկել։ Դարցեալ, Զաքարէս, Գրիգորս, եկած թուրքըն օգոստոսի իուmն Աքուլայց դուս ելաք, օգոստոսի իեուmն եկինք Երևան. մնացի, մինչի հոքտեմբերի ժեուmն Երևանայ դուս եկի, հոքտեմբերի ի եկի Աքուլիս։ Այպա շատ փորցանք, ցաւ քաշեցի. ի թուման դուս էլաւ։ 95r

§ 88 * Թվին ռճէուmն Երևան որ Նաջաֆղուլի խանն Աքուլեցի Քրդունց Ադամիրի որդի Շմաւոն Երևան զառաք դրեց, մինչի սայ Երևան հայ զառաֆբաշի չէր նստած։ Այս Շմաւոնս զառաբութիւն արաւ, մինչի թւին ռճժբուmն Նաջաֆղուլի խանն Երևանայ մաղուլ էլաւ, գնաց Շամախի. Երևան տվին մեծ Ամիրղունա խանի տղայ Աբասղուլի խանն։ Այս Շմաւոնս գնաց Շամախի՝ Նաջաֆղուլի խանին յետ հաաք տէսնուլի։ Այսամամի Աբասղուլի խանն Երևանայ զառաֆխանէն տվեց անապատցի խոջայ Սարգիս ու Երևանայ ձորայգեղցի խոջայ Սարգիս։ 53r

---

[1]) Զեռագրում՝ ռնդ։

Այս Բ Սարգիս խանիցն մին ռ եճ թուման ինջարայ արին, զառաքխանէն վեր կալան մինչի մէկ տարի։ Թվին ռճծգուին Շմաւոն Շամախու եկաւ, թաքրար Աբասղուլի խանն զառաքխանէն ամանի տվեց Շմաւոն, մինչի Թվին ռճծե հոքտեմբերի ամսոյն Աբասղուլի խանն մեռաւ։ Երևան տվին լագզի Ալխաս Միրզին, որ անվանեցաւ Սէֆիղուլի խան։ Այս Շմաւոնս զառաքխանէն էլ ամանի բանացրուց, որ մինչի Թվին ռճծրուին Շահ-Սէյման այս Շմաւոնս ուղեց, տարաւ Ըսպհան։ Սէֆիղուլի խանն զառաքխանէն տվեց ճահկեցի հայ խոջայ Ազաբէկն։ Այս Շմաւոնս Ըսպհան աջալով մեռաւ։ Այս Ազաբէկս մնաց զառաբի, մինչի Թվին ռճիգ ապրիլի ամսոյն մեռաւ։

** 1123 զառավխանեն տվին ձորայգեղցի խոջայ Սարգիսն մինչի Թվին 1128ուին որ Զալ-խան եկաւ Երևան, մարդ ղրկեց, Առզռումայ Աքուլեցի Մասէին բերաւ Երևան, զառաբի դրեց։ Սարգիսն դուս ընկաւ։

§ 89 Թվին ՌՃԻԴ տէր է, արամ ԻԲ, յունվարի գ, օրն 95v
գշաբթի, ես Զաքարեայ այսօր Ջրաւրհնիք[1]) արարի։
Զուրն եկեղեցումն աւրհնեցին, քանզի սաստիկ ցուրտ
էր, ու Բ թիզ ավել ձուն կէր. կարացան ոչ դուրս
գնալ։ Այսպէս ձունն մնաց մինչի մարտի ԺԵումն, ա-
պայ գ, է օրի միջումն այլվի ձնի նշան չմնաց։ Ապայ
այսմ յաւել որթն հողի գլխէն վերն ամէն ցուրտ տա-
բաւ, թէ Աքուլիս, թէ Դաշտն, թէ Օրդուվարայ գետն,
թէ Տրունաց գետն, ամէն տարաւ։

Թվին ռՃԻԴ փետրվարի ԺԳումն Աքուլիս ես Զա-
քարեայ բուն բարէկենդան արարի։ Սաստիկ ձմեռն
էր. վասն մեղաց մերոց էր։

Թվին ռՃԻԴ փետրվարի ԻԲումն ես Զաքարեայ
այսօր Աքուլաց դուս ելայ, փետրվարի ԻԷումն եկի
Երևան, Սիամոնի տղոցն յետ բան կեր, տեսայ, մարտի
ԻԲումն այլվի Երևանայ դուս ելայ, մարտի ԻԳումն եկի
Աքուլիս։ Սիամոնի տղայ Գրիգորն Երևան էր, բերի
Աքուլիս։ Այս Բ ամիս այ, որ գնացել էր իւր ախպէր,
քույրն տեսնելոյ։

Թվին ռՃԻԴ մէհէկի գ, շամշ ԺԵ, ապրիլի գումն
Աքուլիս ես Զաքարէս այսօր զատիկ արարի Աստուծով։

§ 90 Թվին ռՃԻԴ մայիսի ԺումՆ որ Փրղստանայ եՃ 96v
տուն քուրդ[2]) գոնմիշ ելաւ, եկաւ Երևան, թէ՝ մեք
շահի սէվան էք։ Երևան խան չի կէր. Սարուխան-բէկ
Ջայնիշին էր նստել. թողեց ոչ Երասդն անց կենայ,
թէ՝ կացէք, ես շահին արզ անեմ. երբ որ հրաման

---

1) Զեռագրում՝ ջրաւրհիմ։
2) Զեռագրում՝ հրդ։

տայ, ապայ գաք։ Այս Սարուխան-բէկս շահին արզ արեց, շահն ասաւ, թէ՝ պետք չէ։ Մինչի շահէն չափարի գալն, այն եկած քրդերն իւրենց կամով գնացին այլվի իւրենց երկիրն։

§ 91 Թվին ուցիդ հոքտեմբերի ժդու�մն որ Ցղնու պարունն, որ էր վրացի Փարսադան-բէկն, այսօր շահիցն եկաւ։ Ցղնու մին է, ը մարդ գնացել ին շահն Փարսադանին ձեռացն գանգատ։ Շահն բուրմիշ կանէ, թէ՝ ցղնեցիքն գուդէն վիզն դնեն, տանեն Ցղնայ, դիվանն էնտէղ անեն։ Ջերայ շահին ծուռ ին արզ արել, շահն ռ թուման ջարիմայ գձեց ցղնցուց վիզն։ Այսօր եկաւ, Երասդն անց կացաւ։ Մեք, Աքուլաց վարդապետ, դօվլաթաւորք, մին ծ մարդ գնացինք Դաշտի տակն, բարով տվինք, վերոյ ը հոգին ոմն գնդած, ոմն բուխավանծ՝ գնաց Ցղնայ։ Այսպէս պահեց մինչի զ ամիս, ջարիմէն առաւ, ապայ թողեց։ Ահա այս է յամ է, այս Փարսադանս տնով, ախպէրով որ Ցղնայ ուտում այ, շահի յօքմով, սիթամով[1]։ 90r

§ 92 Թվին ուցիդ դեքտեմբերի խումն Աքուլիս տղայոց ծաղիկ երևացաւ. շատ տղայ մեռաւ։ Մինչի յուլիսի վերջն մնաց։ Տուն չի մնաց, որ ընկաւ ոչ։ 97v

§ 93 Լ Թվին ուցիդումն Աքուլիս էր Ադրբէջանայ վեզիր Միրզայ Իբրահիմի զաֆտումն։ Այսմ յամի էր Աքուլաց մէլիքն Մէլիք-Օվին։ Այսմ յամի խաս գեղորէիցն մէլիքներն գնացին Երևան, Միրզա Իբրահիմն տէսան, մին քանի թուման փէշքաշ արարին, որ այս տարի դարուղայ չաղարկի։ Ղարուլ եկաւ։ Ջերայ վէզիրն Երևան Սէֆիղուլի խանի ապրանքն գրում էր, գրեց, ապրիլի ի վեզիրն գնաց այլվի Գանջայ։ 95v

§ 94 Թվին ուցիդ այս տարոջ զ ամսէն ե խասի դարու- 97r

---

1) Ձեռագրում՝ սիթ... 90-րդ թերթի ներքևի անկյունի ժաշված լինելու հետևանքով բառի շարունակությունը չկա։ Տպագիրը (յերես 55) հատվածն ավարտում է ասնի յօքմով բառերով ու վերջակետով։

գութիւն տվեց աքուլեցի Մուսաբէկի տղայ Սարուխան-բէկն։ Շահն Ղազվին էր։ Աքուլաց մէլիքն էր Օվին։

* Որ Միրզայ Իբրահիմը կտրեց 1129ուն այս խասէրն. Մուսայբէկէն կտրեցին, տվին Խոստրով աղէն։

§ 95 Թվին ՌՃԻԵ յունվարի գ, ուրբաթ է, արամ իբ, օրն, ibid.
եղաբաթ, ես Զաքարէս այսօր ՀրաւԷրնէք Աքուլիս
արարի։ Աքուլաց Վէրի թաղի ժողովուրդն Հուր եկե-
ղեցումն աւրհնեցին. գ եկեղեցին ժողովեցան, Շամբի
կհամն Հուր աւրհնեցին նալրով։ Սաստիկ ցուրտ էր։

§ 96 Թվին ռՃԻԵ յունվարի Ե որ Յակոբ կաթուղիկոսն, ibid.
մտաւ Երևան, հրաշալի ՀրաւԷրնէք արաւ, յունվարի Ը
Յակոբ կաթուղիկոսն Օնոփրիոս վարդապետն էջմիած-
նումն բռնեց, բարձակն վեր արեց, բուխաւեց, մին
քանի օր պահեց, ողարկեց Սէվանու անապատն։ Մին
քանի օր մնաց, Օնոփրոսն մեռաւ։ Յետով կաթուղի-
կոսն կուգայ Գողթան տունն նվիրակ։ Ցղնու պարոնն,
որ էր վրացի Փարսադան-բէկն, յետ կաթուղիկոսին
հակառակ ընկաւ, թէ՝ դու Օնոփրիոսն նախանձու ըս-
պանեցիր։ Ապայ Փարսադան-բէկն Երևանայ խանին
արդ կանէ, խանիցն մարդ գայ, կաթուղիկոսն տանէ
Երևան։ Ը ամիս մնաց, ասա, անդ կաշառք տալ է,
զՃ թուման դուրս էլաւ. պատճառն Օնոփրիոսն։ Դար-
ցեալ, խանն մարդ դրեց կաթուղիկոսին յետ, թէ գ...[1])
Ցղնայ, Փարսադանին յետ բարիշէ։ Կաթուղիկոսն
եկաւ Ցղնայ, բարիշեց... Մայիսի ԻԷ եկաւ Աքուլիս,
նվիրակն ժողովեց, շնչագլուխ առ... արբաբ տեղն ոմն
մին թուման, ոմն այլ ավել։ Աքուլաց գ եկեղե... մին
ՃԻ թուման տարաւ։ Թվին ռՃԻԶ յունիսի մէկ Յերու-
ան... անիցն փախաւ, գնաց Վ...[2])։

[1]) Համանուրեն գնայ։ Այս հատվածի բաղմակետերը ցույց են տալիս ձեռագրի թերին, որ առաջացել է 97-րդ թերթի անկյունի սաստիկ փշանալուց։

[2]) Տպագրի ուերում գուցե թերթի այս մասը փշացած չեռվորի հետևանքով նա (տերես 64) կարդացել է Վրացուն։

§ 97 Թվին ռճիե փետրվարի գ ես Զաքարէս բուն բա- ibid.
ըէկենդան Աքուլիս արարի։ Սաստիկ ցուրտ էր։ Գինու
լիդրն բճ դիան էր, ամայ գինու լիդրն ը հողայ էր։
Թվին ռճիե յարացի իե, շամշ ե, մարտի իգումն
Աքուլիս ես Զաքարիայ որ այսօր զատիկ արարի, միան,
իւղն խիստ ղթ էր մինչի մայիսի ի, ապայ բօլացաւ։
Դարցեալ գինին լիդրն բճ դիան, միան գճ դիան։

§ 98 Թվին ռճիե մայիսի բումն սաստիկ ձուն եկաւ։ Ոչ 96v
թէ միայն Աքուլիս, այլ ամէն երկիր եկաւ։ Ապայ
ամէն պտուղ թէ ցորեն յետ ընկաւ... [պ]ատճառն ձու-
նըն էլաւ, որ Աքուլիս վարդավառին ծիրան չէր հասել։

§ 99 Թվին ռճիե օգոստոսի ժդումն ես Զաքարեայ այսօր 88r
յին Զուղայ էի[1]։ Այսօր Թիֆլիզու Շահնուզ խանն
շատ ասկարով, շատ ղուլ ու ղարավաշով, շատ գինա-
թով այսօր եկաւ, Երասդն անց կացաւ, որ գնայ Ըս-
պըհան։ Պատճառն այս էր, որ Շահ-Սլէման թագա-
ւորն իւր զօրչի-բաշի Մուստաֆայզուլի-ըէկին ըռա-
զամ կուտայ ու մէհմանդար կանէ, թէ՝ գնայ Թիֆ-
լիս, խանն վեր առ, եկ։ Այսօր եկին. ռ ձիաւոր էր
մեծ ու փոքր։ Ա ուղտ քաջավով ղուլ ու ղարավաշ էր
տանում շահին։ Ամէն երկիր ազամաթ էր տանում
յօքմով։ Գնաց մինչի Խօշկառու, անդ մեռաւ. ամեն
զատն տարան Ըսպհան[2]։

§ 100 1125 հոքտեմբերի ժումն որ ղըրզցի հոսմ մետրա- 23r
պօլիտ Գերմանիոս եպիսկոպոս, մին հռում վարդա-
պետ, անունն Անաստաս, գ, դ վրացի տղայ, այսոնք
Վրաստանայ եկին Աքուլիս ժողով անելու։ Սոքայ Ղրզ
վանք ունին նորոգելու։ Այս պատճառ եկել ան Վրաս-
տուն։ Շահնուազատ խանն գնում էր Ըսպհան, սայ եկ
յետն եկաւ Նախջուան։ Յակոբ կաթուղիկոսն Նախջի-

---

1) Զեռագրում՝ Էին։

2) Զեռագրում՝ Ըսպհ... (88-րդ թերթի անկյունը մաշված է)։

վան կու լինի։ Շահնուվազն խանն կաթուղիկոսին կասի, թէ՝ պիտի մին գիր տաս այս հօռոմիս, որ Հայաստան ժողովք անէ։ Լաւ ազաթ անէն, կաթուղիկոսն աւրհնութեան գիր կու տայ, որ լաւ ընդունեն։ Եկաւ Աքուլիս, գ եկեղեցին մանՀ եկաւ, գ թումանտվին, լաւ ազաթ արարին։ Ինքն էլ լաւ մարդ, լաւ հավան կացաւ մեր հայոց պատվիրանին, սահմանքին։ Ագուլաց գնաց ղէպ Ղափանն, որ գնայ Մօսկովն։

§ 101 — 1112ումն որ Աքուլաց խճայձորու մահլի սուրբ 25r
Ովանէս անվան եկեղեցին ըսկիսան արարին վեր առնելու։ Այս մահլիս կես գերեզմանատունն այս եկեղեցուս պարիսպիս մէջն էր, ապայ շիտակ պարիսպ չունէր։ Ապայ որ սահմանեցին, թէ եկեղեցին շինէն, պարիսպն քաշէն, ապայ բերին, գերեզմանատունն էլ վարթարավ արարին. ումն նշանաւոր մեռել կէր, զայն թողին, ապայ անտէրն, աննշան մեռելն քարն վեր կալան, ումն դրին եկեղեցու պատն, ումն ձգեցին եկեղեցու դռներն։ Ապայ այսուչեան սահմանեցին, թէ ինչ մեռել որ լինի, տանեն եկեղեցոյ յանդէպ յարաւայի կողմն տափարակ տեղ մի. անվանեցին տէղի անունն Բէկ-օղլի։ Այս Բէկ-օղլի առաջի դրած մեռելն երեցփոխ Անդոնի կնիկն է թաղած։ Այս հանգիստիս հիմն այս է, որ 1112ումն։ Դարցեալ, 1113 եկեղեցին ձեռք տվին շինելոյ, 1114ումն ավարտեցաւ, աւրհնեցին, պարիսպն քաշեցին, թէ խուց, թէ սեղանատուն շինեցին, ապա պրծաւ։ 1125 նոյմբերի ծումն ես Աղամիրի որդի Զաքարէս մին լաւ, մեծ չինարի տնգայ ես բերի, այս եկեղեցուս պարիսպի մէջն տնգեցի վասն յիշատակի[1]), քանզի մեր նախնի պապերն ատ էն թաղեալ Աստուած ողորմի «Աստուած ողորմի» ասողաց, մին «հայր մեր» ասողաց։

---

[1]) Ձեռագրում՝ յիշատի։

§ 102 *1125 նոյմբերի ժդումն Աքուլիս ես Զաքարէս Աքու-* 23r
լաց դուս եկի, նոյմբերի ժբումն եկի Թարվեզ։

§ 103 *1125ումն Աքուլիս գիր եկաւ, թէ Ժռնգստան, ի* 26v
քաղաքն Վենետիկու) օլքումն թուջի հրամանաւն զճ
փաստաւ Լօնդրինայ չուխայ կրակով երել ան։ Այս
չուխիս բճլ փաստաւն աքուլեցի Շահշուվարենց Փա-
նոսին այ, մարաղին այլոց, թէ ջուլեցու, թէ ջհուդի։
Այս պատճառէս երեցին. այս չուխէքս Ամարդամ ա-
ռել ան, թէ տաննեն Վենետիկի օլքոմն, խարջն տան,
անց կացանեն ծոմն, գնան Հօպրավանատիկի վերայ
տաննեն Ուռումէլի, թէ Խորմացտանն, թէ բերէն Դզել-
բաշի երկիր, ծախեն։ Յենց որ Վենետիկու չուխայ
գործողն, ծախողն, գնան թուջին երես կանգնեն, թէ՝
այս չուխէս գնայ Խորմաց երկիրն, մեր չուխէն կո-
տուր կու ընկնի։ Դարցեալ, մին էլ մահանայ արին,
թէ՝ այս չուխի տէրն գայ, փող դնի բանքլուումն, մու-
չուլգայ տան, թէ՝ մեք այս չուխէս Ուռումէլի բանաք
ոչ, ծախինք ոչ, մեք ձեր փողն յետ տալու լինիք։
Ոմն կասի, թէ՝ սուտ այ, էլ փողն յետ չեն տալ, ոմն
կասի՝ ձեզ վախեցնում էն։ Մինչև աստ, անդ հարց ու
փորց անէն, չուխի կարավանն գնայ . . .[2] *խակիլէն,*
բառնայ Բ նավի, Է, Ը օրի ծովի երեսի ման գայ,
ըռուզգար չի լինիլ, թէ անց կենայ։ Յետով թուջին
ամբը գայ այն տէղին ծովի ջնդրիալին վերայ, թէ՝
այտ Բ նավ- ‖ *ումտ որ զճ փաստաւ չուխայ, դուս* 27r
տուր ամէն խակիլումն, կրակ տուր, այրէ։ Ջնդրիալն
գնայ, ծովի միջումն Բ նավն յետ դարցնի, բերէ, չու-
խէն ամէն բանայ, ածի կրակի մէջ, այրէ։ Ասել ան՝
կէսն ձեզ, կէսն տվէք մեզ կամ ամէն տվէք, Սան-
Մարկու լինի, այրել մէք, դարուլ չարին։ Այսպէս
գուլմ ու սիթամով այրեցին։

---

1) *Ձեռագրում՝* Վենիկու։

2) » *մեկ բառի տեղ է թողած, այնպես էլ դատարկ մնացել է։*

* Այս Փանոսըս դահը անէ, ցաւ բերէ իւր վերայ, որ ձեռաց գնայը մինչի կէս սհաթ, ապայ խելքն վրայ գայը։ Այսպէս մնաց, մինչի 1132 ապրիլի Ի մին գիշեր ձեռաց գնաց, մեռաւ։ Պատճառն զուսա արաւ[1]։

§ 104 Թվին ուցիե որթն կէսվայկէս այլվի ցուրտ տարաւ, 97r
որ անցած տարոյս ցուրտ տարած որթն, որ չէպ էր գձել, այն չէպն շատն՝ ել ցուրտ տարավ։

---

1) Ձեռագրում «1132.... արաւ» հատվածը հեղինակը գրել է լուսանցքում՝ ուղղահայաց տողերով։ Տպագիրը վերջացնում է ձեռաց գնաց, մեռաւ բառերով։ Շարունակությունը Ձեռագրում պյսպես է. ատ֊ն զս աւ։

§ 105 Թվին ՌՃԻԶ տրէի գ, ապամ ԻԲ, յունվարի գ, օրն 23v
շաբաթ, ես Զաքարեայ այսօր Ջրաւրհնիք Թարվեզ ա-
րարի։ Ամայ է սրհաթ կէր չուրի լոյսն, որ սկսան
ժամ ասելն։ Առաւօտեան ժամն, պատարագն, ջուրաւրհ-
նեքն ամէն արարին, ժամն արձակեցաւ, դեռ մին
սհաթ կեր չուրի լոյսն։ Այս պատճառէս կանուխ ա-
րարին, որ թուրք չի գայ, եկեղեցին լցվին։ Ամայ ախր
կու գան, ճար չկայ։

§ 106 1126 փետրվարի ԻԵուն Թարվեզ ես Զաքարեայ ibid.
բուն բարեկենդան արարի։ Լև տարի, լև հավայ, ա-
ռատ, բարեկի։ Այս ձմեռս սհալ ցուրտ արաւ։

1126 մարտի ԺԵուն, օրն եշաբաթ, ես Զաքարէս
այսօր Թարվեզու դուս եկի, մարտի ԺԸուն եկի Ա-
քուլիս։

1126 ապրիլի ԺԵուն, մէհեկի ԺԵ, շամս իզուն ես
Զաքարեայ զատիկ Աքուլիս արարի. էժանութիւն. ա-
լիւրն Ի դիան, ըրինձն ճԻ դիան, գինին բճ դիան,
անձրևային, բարի։

1126 մայիսի Իուն Աքուլիս հավի կոտորուն ըն- 24r
գաւ։ Ոչ թէ միայն Աքուլիս, Ըսպհանայ մինչի Երե-
ւան այս մէջս, այսպէս հաճի կոտորեցին, թէ՝ հաւի
փորուն օձ այ հասլ ելած. ով որ հավի միս կամ ձուն
որ ուտի, իր օր կու մեռանի։ Այսպէս դղրթուն ընկաւ։
Շատ տէղ դեռինն փոս արարին, հավերն սաղ լցին
մէջն, հողով ծածկեցին։ Շատ մարդ հաճի մորթեր,
ձգեր դուս։ Այսպէս մնաց մինչի դ, ե ամիս, այլվի
վարթարաւ ելաւ, փոշումանութիւն, սուտ ելաւ։

§ 107 1126 յունիսի գուն անձրև եկաւ Աքուլիս։ Այլ 24v
անձրև չեկաւ, մինչի օգոստոսի ԻԷուն անձրև եկաւ։

Այսպէս երաշտ անցաւ ոչ թէ միայն Աքուլիս, այլ Ըսպհանայ մինչի Առզռում։ Այս երաշտ անցաւ վասն մեղացն։

§ 108 1126 յուլիսի ըու�Աքուլիս վարդապետ թէ գլխաւոր մարդիկ կանկնեցին, թէ մեռելի յետ կնիկ չի գնայ հանգիստ։ Զերայ մինչի հիմայ մեռելին յետ կնիկ կու գնէր հանգիստ. մինչի մեռելն թաղէն, «Փառքի բարձուիս» ասէն, ապա կանայքն յետ դառնան. անհաժութիւն եր։ Բերին, այսպէս սահմանեցին, թէ՝ կանայքն ոմն եկեղեցուիս յետ դառնան, ոմն մինչի գետն գնան, յետ դառնան։ Տեղնու գօրայ այսպէս սահմանեցին։ 24r

1126 յուլիսի իբուիս Աքուլիս ես Զաքարեայ այսօր վարդավառ արարի Սատուծով։

§ 109 1126 հոքտեմբերի իեուիս ես Զաքարեայ այսօր Աքուլայց դուս եկի, հոքտեմբերի իթուիս եկի Թարվեզ։ 24v

§ 110 1126 դէքտեմբերի ժբուիս Թարվեզ ես Զաքարէս գնացի Մարաղայ, խանին յետ բան ունէի, տէսայ, մին քանի օր կացայ, 1127 յունվարի ժաուիս այլվի եկի Թարվեզ։ Ամայ Մարաղայ մին ցուրտ, մին դիամաթ ձուն եկաւ, որ ե օրի մարդ մարդի տուն չի կարաց գնալ. գ օրի ձուն էր դալիս, քամի, բօրան սաստիկ։ ibid.

§ 111 Թվին ուցիգուիս Թարվեզ մին վարդապետ քարոզում ասաց, թէ՝ մեծն Հռոմայ գրքում տեսայ, Ֆրանգաց էլ լսեցի, թէ Քրիստոսի գալուն մինչի այժմոյս ժբ միլոն մարդ մարտիրոսացել այ վասն Քրիստոսի։ 23v

§ 112 1126ուիս Աքուլիս էր աքուլեցի Մուսարէկի տղայ Իսախան-ըէկի զաֆտուիս։ Ոչ թէ միայն Աքուլիս, այլ ե խաս գեղն, որ է Մեղրի, Աքուլիս, Շօռութ, Լէհրամ, Ազտապատ, այս ե գեղս շահն ավել այ Իսախան-ըէկի զաֆտն։ Իսախան-ըէկն ինքն Ըսպհան այ, ամայ գեղրանքի դիվան, թէ մալիջհաթն կիտելն 24v

լուր տղայ Մուսայլէկն ա անում։ Այսամ ամի Աքուլայ մէլիքն է Մէլիք-Օվին։

§ 113 Գ 1126ումն Երևան Սէֆիդուլի խանի նոքարն, որ է 25y
պաջաբ, բայաթ, խանին երես կանգնեցին, թէ՝ այս Բ
ամ է, որ դու եկել աս Երևան, մեզ դոնլուղ չես տվել,
տուր, կամ թէ այս բէդխաթ բաներս վեր կալ։ Այս
պատճառէս աղմուկ ընկաւ մէջն, շատ կռիւ, մինչև գ,
դ արիւն էլաւ։ Խանն թողին ոչ բերթին դուս կամ դի-
վան անէ։ Խանն շահին արզ արեց. նոքարն արզ արեց։
Այս պաջաբէս մին աղայ, անունն Ցաթալիրէկ, գլուխ
քաշեց, մինչի դ, եճ ձիաւոր ժողովեց, Իրանց էլի խօս-
քով, զուլմ ու սիթամ չարաւ։ Ասացին. մեք այս խանս
ուզում չենք։ Մինչ որ շահէցն դուլ եկաւ, անունն Ջա-
նիրէկ, եկաւ Երևան, Բ կողմանէն մանսար արաւ, Բ
կողմանէն շատ կաշառք տարաւ, գնաց շահին արզ անէ.
ամբր շահին այ։ Դէռ Ըսպհանայ շահին մարդ չէր եկել,
խանն մարդ դրկեց, Նախջիվանայ խան Մահամադ-
Ըռազայ խանն մին ճ ձիաւորաւ եկաւ Երևան, գ սուլ-
թան էլ բերաւ։ Այս ասկարս ամէն ժողովին, մին օր
դաֆիլ բէրթին դուս գայ, կանչէ՝ ով որ խանի կողմն
է, ձի նստի։ Քանզի էլն Բ կողմն էր ճղված, ոմն՝ Ցա-
թալիրէկի, ոմն՝ խանի։ Այսպէս դուս եկաւ, գնաց,
Վեթի գետի վրայ կռիւ տվին, ամայ արիւն չէլաւ։
Տվին Ցաթալիրէկն բռնեցին, ‖ դոշունն դաղլմիշ էլաւ, 26r
Ցաթալիրէկն մին ծ մարդով դրին բերթի զնդանումն։
Ցաթալու թարի աղէքն փախաւ ոմն Գանջու վերայ,
ոմն Զօրսու վերայ, գնացին Ըսպհան շահին գանգատ։
Խան եկ թաքրար շահին արզ [1]) արեց։ Տեսնուս, ինչ-
պէս կնի։ Այս եղև 1127 ապրիլի ԺՈՒՄն Երևան։ Դար-
ցեալ, թէ Նախջիվանայ խանն, թէ սուլթաններն [2])
մինչի Բ ամիս Երևան կացին, շահիցն խաբար չեկաւ։

---

[1]) Զեռագրում՝ ազ։
[2]) » սուլթաններն։

Սոքայ եկ ամէն գնացին իւրենց տեղն։ Յիմիկ Սէֆիզուլի խանն բերթին դուս գալիս, դիվան անում,[1]) ուտում, խմում իւր թաբինովն։ Ով որ փախած է, մնաց, ով որ գնդանում է, մնաց, չուրի խարար գայ։

* Դարցեալ, վերոյ գրած գանգատաւորքն գնացին Ըսպհան, թէ շահին գանգատ։ Շահին դիվան չունէր, դիվան չանէր. ոչ ով դավլին հասան ոչ։ Գ, դ ամիս մնացին, աջիզ էլան, բաց թողին, եկին Շարիւր, մին ի օր նստան, ով որ խանի թաբի էր, բրոնեցին։ Խան որ տէսաւ այսպէս, խան էլ ծաթալի էկն գնդանին հանեց, խալաթ տվեց, մարդ մէջ գձեց, թէ բարիշէն։ Աղալարն բարիշեց ոչ. ամէն կիտվեցան Երևան, խանն կոխեցին բէրթն, ոչ թողին դուս գայ, ոչ դիվան անէ։ Խորակն տվին, մնաց իւր սարումն[2])։ Խանին մեծ տղայ ունէր. աղէքն գնայ դիվան-բէկի դրին իւրէն միջումն սոտով[3])։ Այսպէս մնաց։ Տղի անունն Աբասղուլի[4])։

§ 114 Այս եր Երևանայ ջումիաթի, խանի կռիւն։ 27r
Մնաց մինչ որ 1128 յունվարի իգումն այսօր Զալ-խանն չափարով սալթ եկաւ, մտաւ Երևան, շահի յօքմով խան նստաւ։ Յին Սէֆիզուլի խանն, որ էր Ըռաստամ խանի տղէն, սայ մազուլ եկաւ։ Շահ-Սէլէման այսպէս էր ըռաղամ տված, թէ Զալ-խան խան լինի, գնայ Երևան, ուղրաշի դաջար աղայ Յումաթբէկն իւր գ տղայովն բռնէ,

---

1) Ձեռագրում՝ դիվանում։
3) Թերևս սարայումն։
3) Տպագիրը (յերես 69) ունի սոտոդ։
4) Ձեռագրում՝ Աբասդ... (թերթը մաշված է)։

գնդէ, ղրկէ Ըսպհան. նայ է այս աղմուկս գձել այ Երևան։ Այսօր Զալ-խան եկաւ, Յիմաթբէկն, գ տղէն բռնեց, գնդեց։ Սէֆիղուլի խանն մազուլ էլաւ, իւր խաղինով, իւր ապրանքով, որ մինչի է, ըճ ուզտ բարցաւ, մարտի մէկուն Երևանայ դուս եկաւ, որ գնայ Ըսպհան։ Շահն այսպէս էր հրաման տվել։ Ամայ դիր շատ անէծ տվող ունէր Սէֆիղուլի խանին։ Մարտի ԻԲուն, օրն շաբաթ, այսօր Զալ-խանի հարան, խանի տղէն, որ է Աբասղուլի խանի թոռ, անունն Մահամատղուլի-բէկ, այսօր մտաւ Երևան։ Դարցեալ, յունիսի ԻԲ այս Յիմաթբէկս գ տղոցովը գնդած[1]) Երևանայ դուս էլաւ, տարան Ըսպհան։ Դարցեալ, այս Սէֆիղուլի խանս գնայ չուրի Ղումու Բ օր առաջ, անդ մեռաւ, բերին Ղում, թաղեցին մայիսի ԻԵուն։

---

[1]) Զեռագրում՝ գնդաց։

1127 յունվարի գ, տրէ գ, արամ իբումն, օրն կիրակի, ես Զաքարեա այսօր Ջուրաւրհնիք Մարաղայ արարի։ Դարցեալ, Մարաղու Յուսէնղուլի խանն հայերն կանչի, թէ՝ իմ մօտիկ գեղորից կարդացողն ամէն ժողովեցէք, Ջուրաւրհնէք արարէք։ Հայերն կասին. մեր մէջն վարդապետ չկայ, լաւ կարդացող չկայ, լաւ փուսադ չունիք, մինչեւի այժմոյս եւած չէ, թէ գիտենք։ Խանն կասի՝ չէ, ինչ որ կայ, բարի այ։ Մին ծ երից եկաւ, հայի մահլումն ջուր աւրհնեցին։ Դիր աղաք ժողովուրդ այ։ Ոչ խաչ, ոչ լաւ խաչ-ալամ. այս ջուրաւրհնիքս այսպէս արարին։ 27v

§ 115 1127 փետրվարի դումն Աքուլիս վերի թաղի եկեղեցու ավաք երեցն, որ էր Տէր-Ազարի որդի Տէր-Ալէքսան, այսօր առ Աստուած փոխեցաւ, եղաւ եկեղեցոյ դրսի յարաւայկողմն, թաղեցին օրն գշաբթի։ Սորայ հայր Տէր-Ազարիայ այլվի աստ էն թաղած. հայր, որդի միայտեղ։ Սայ էր կ ամաց։ Սորայ իւրմէն մարմնաւոր յիշատակ չունէր, ապայ հոգևոր շատ ունի։ Սայ ծ ամ է, որ այրի էր։ Սայ գնաց Երուսաղէմ, եկաւ, կինն առ Աստուած էր փոխել. այս է։ ibid.

§ 116 1127 փետրվարի ծ, քաղոց ժա, ուղդան իէումն թարվեզ ես Զաքարեայ բուն բարեկենդան արարի։ ibid.

§ 117 1127 մարտի լա, յարաց ն, շամս ժաումն թարվեզ ես Զաքարեայ այսօր զատիկ արարի. Աստուծոյ ռ զոհութիւն։ 28v

1127 ապրիլի եումն թարվեզ ես Զաքարես այսօր դուս էլայ, Մարանդու վիրայ ապրիլի ժբումն եկի Երևան։

1127 մայիսի ժաումն Երևան որ աքուլեցի Փիրու-

մի որդի Մարկոսն առ Աստուած փոխեցաւ, սայ Զորայգեղու եկեղեցոյ պարիսպի մէջն, յարևելեան կողմն թաղեցին։ Սայ էր ծե ամաց։ Սայ գ օրի յիվանդ կացաւ։ Աստուած ողորմի։

1127 մայիսի իսումն Երևան ես Զաքարես այսօր դուս եկի, մայիսի իդումն եկի Աքուլիս։

1127 յուլիսի էումն Աքուլիս ես Զաքարեայ այսօր վարդավառ արարի։

1127 օգոստոսի մէկումն այսօր մին ազատապատցի բազրկան եկաւ Աքուլիս, շատ խաչ, շատ անօթ բէրաւ ծախու էջմիածնայ աթոռակալ Մուքել վարդապետի աւրհնութեան թուղթով, գրած, թէ՝ Երևանցի զառաբի Զաքարէն էջմիածնայ համար պարտք էր արած։ Զաքարէն մեռաւ, բազրկանին խանին արդ արին, խանն յօքմ արաւ, թէ տան, էջմիածնու[1]) փող չկէր, պարտք չընկաւ[2]), ճարեր- || նիս կտրաւ, անայ այս 29r
չափ խաչ երծաթէ ու անօթ փողի տեղ տվինք այտ մարդիդ։ Ամէն մարդ անհոգ առնու թէ իւրենց եկեղեցոյ, թէ վանքի։ Մեք մեր յօժար կամօք տվաք պարտուց տէղ։

* 1127 նոյմբերի ծումն Աքուլիս որ մին թուրքավար մանսար շինեցին, տվին Մէլիք-Օվին, որ գնայ Ըսպհան, Աքուլացն անվան ու Դաշտին յօքում հանի, քալանթար լինի։ Ֆանդի առաջմէ ուրիշ քալանթար Աքուլացն ու Դաշտին դախլ չէն անիլ։ Այսմ յամի ուզում էն, որ մուղարար անէն, որ ով որ Աքուլացն ու Դաշտին մէլիք լինի, քալանթար էլ նայ լինի։ Այս Մէլիք-Օվին գնաց Ըսպհան, համ ե խասի մալիջհաթն Մուսարէկն տվեց Օվին, թէ՝ տար Ըսպհան,

---

1) Ձեռագրում՝ էջմիածնու։
2) » չնկաւ։

տուր իմ հայր Իսախան-բէկն, համ քո բանըա[1]) չինէ։[2])

§ 118. — 1125 օգոստոսի ԺԵՌԻՆ Շահնուազատ խանն, որ էր աղգաւ վրացի, առաջ Շահաբաս սայ տարաւ Ըսպահան, քուրդացրուց, Թիվլիսու խանութիւն կուտայ սորայ։ Յայսմ յամի Շահ-Սլէման թագաւորն ղուչու-բաշու տղայ Մուստաֆայղուլի բէկն ըռաղամով ղրկեց, թէ գնայ Թիվլիս, Շահնուազատ խանի մէհմանդար-բաշի։ Այսօր շատ զօրօք, որ մինչի ռ ձիոյ գաբի տային, եկին Յին Ջուղայ, որ գնում էն Ըսպահան։ Սորայ ալաֆ ուլուֆէն ամէն քաղաքէ, դէղոբէից կու տային զուլմ ու սիթամով։ Սայ հասնէ Խոշկառու անվան ժանձիլն, անդ կու մեռանի. ումն ասաց, թէ աջալով, ումն ասաց, թէ դէղատու մեռաւ. ըստուքն Աստուած գիտէ։ Սայ տարան Ղում քաղաք, անդ թաղեցին։ Զօրքն ամէն գնաց Ըսպահան։ Շահն մարդ ղըրկեց, իւր տղայ Գօրգին Միրզայ տանի։ Խանն որ Թիվլիսու դուս էլաւ, իւր միջնակ տղէն, որ այ Գօրգին Միրզայ, դրեց իւր տեղայպահ։ Շահն մարդ ղըրկեց, այս Գօրգին Միրզեն տարաւ Ըսպահան, թուրքացանի, անունն փոխի, դնի Շահբանդայ խան, հօրն տէղն տայ սայ։ Սայ էր ռ ամայ։ Դարցեալ, Մուստաֆայղուլի բէկն դնի Շահբանդայ խանին յետ մեհմանդար, Արդաւելու վերայ գայ, գնայ, 1127 յունվարի ԺԱՌԻՆ մտանէ Թիվլիս։ Շահնուազատ խան էր հ ամայ։ Այս Մուստաֆայղուլիս յետ դառնայ, թէ գնայ Ըսպահան, սայ գայ Գանջայ, անդ մեռանի. այս է։ 28r

§ 119 * — 1111ումն Աքուլիս Սնասեց կհավի յին անունն Գ կհաւ կասին. այս կհաւիս Բ կհավն քօռացել այ, ջուրն ցամաքել. ահայ 40v

---

1) Ձեռագրում՝ բանis:

2) Հաջորդում են J, K հավելագրություններն ուրիշ ձեռագրագրով։

աքուլացի այր ոմն, անունն Խօջինց Թումման, այս Թումանոս այս կհավլիս մին կհաքն հանեց, մին ժատն ջուր դուս եկաւ, ձգեց իւր այքին, որ է Թվին ռճժա։ Այս Թումանս իւր այքին կհավոքն ծախեց սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս վարդապետն, դինն կ Թումման, Թվին ռճիէ։ այս է։

§ 120 — Թվին ռկառ։ Աքուլիս որ Աքուլաց 41r
մելիք Մելքումն որ ինքնայգլուխ մին ախպիւր հանեց, տարաւ իւր տունն, մին լուլայ ջուր Մէյդանի Թաղումն դուս ձգեց, որ Մելիք-Ազավելի դռան, մին լուլայ ջուր իւրենց դռան դուս ձգեց, այս է՝ վասն խեյրաթի։ Այս Մելքումս այլվի այսմ Թվիս Խաչձորու սուրբ Ովանէս եկեղեցին[1]) մարամաթի շինեց։ Որ այժմ ասի Մելիքինց կհաւ։

— Թվին ռկեռ։ Աքուլիս այր ոմն վաճառական, անունն Նուրի, մին ախպիւր հանեց, որ այժմ ասի Նուրունց կհաւ, որ է Վերի Թաղումն։

— Այսմ Թվիս մեր վանքի ավել անուն Պուլա պարոնտէրն ըսպանեցին վասն նախանձու առաջնորդութեան։

---

1) Ձեռագրում՝ եկեցին։

§ 121 1128 տրէի գ, յունվարի գ, արամ Իքու�Աքու- 29v
լիս ես Զաքարեայ այսօր Ջրաւրհնիք արարի։ Ամէն
ժողովուրդ իւրենց եկեղեցումն Ջուր աւրհնեցին. օրն
Բշաբթի. Աստուծոյ գոհութիւն։

§ 122 1128 փետրվար ամսոյ ըսկիսպ էլաւ երեխուց կար- 31r
մրուկ[1]) դուս գալ մինչի յուլիսի առաջի օրն, ապա
վարթարալ էլաւ։ Ամայ շատ երէխայ մեռաւ։ Տվօղին
փառք։

§ 123 1128 փետրվարի ծգումն Աքուլիս ես Զաքարէս այ- 29v
սօր Աքուլայց դուս էլայ, փետրվարի ծէումն եկի Երև-
ան, որ Աբասղուլի խանի փեսայ Զալ-բէկն նոր
եկել էր Երևան, խանութիւն անէ։ Փետրվարի խումն,
օրն եշաբթի, ես Զաքարէս գնացի դիվանի, Զալ-բէ-
կի խանութիւն մումբարաք արեցի։ Որ էլաւ անունն
Զալ-խան։ Սորայ ասլն վրացի այ, շահի դուլ այ։

1128 յարացի մէկ, մարտի քումն Երևան ես Զա-
քարէս բուն բարէկենդան արարի. առատ և բարի։
Աստուծոյ գոհութիւն։

1128 մարտի խաումն, օրն ուրբաթ, Զալ-խան բէր-
թէն դուս եկաւ, գնաց, բերթի տակի կարմունջն անց
կացաւ, գնաց, թէ գնայ վերոյ իքին գաչտ աղալ-
ռոզն։ Իքումն նստած՝ մին Բ մարդ եկին մին դաչար
աղայ ձեռն յետուն կապած, թէ՝ մին իքում զօռով մին
կնիկ կոխել այ, զաֆտել։ Կնիկն ել բերած։ Խանն մի
սահաթի միջում դիվան արաւ. նոյն տեղն գլուխն
տվեց։ Առաջի արիւնն այս էր։ Ամէնս արսեցան։ Ա-
նունն Մուրադի-բէկ էր։

---

1) Ձեռագրում՝ կամբուկ։

1128 ապրիլի Ի, ուէհեկի Ի, ադամ մէկ, Ինն իա 30r
Երևան ես Զաքարէս այսօր զատիկ արարի. լև և առատ Աստուծով։

§ 124 1128 մայիսի Իեուն Թողաթ խիստ ժանդու էլաւ, 32v
շատ ապրանք, շատ տուն ու դուքան, քարվանսարէ այրեց, ապայ մարդ չայրեց, քանզի ցերէկ էր։

§ 125 1128 յունիսի դուն Երևան, օրն դշաբաթ, ե սնա- 30r
թուն յանկարծակի քամի վեր կացաւ, դղրթում, որոտուն, այնպէս շարժ եղև, որ ական թոթափելու ամէն փլաւ. որ Նորայդավթայ մինչի Գոգչէն, Ղէնարէն մինչի Էջմիածին ամէն վեր եկաւ։ Երևանայ Բ եկեղեցին, Երևանայ անապատն, Զորայդեղու եկեղեցին, Բեղարթու վանքն, Ամենայփրկիչն ամէն վեր եկաւ։ Բեղարթու Ըստէփանոս վարդապետն Երևանայ անապատուն մնաց հողի տակի։ Երևանայ բերթն, խանի տներն, թէ համամ, թէ մաշիթ, թէ մինարէ, ամէն վեր եկաւ։ Մինչի Ը, Թ օրի հողի տակի մեռել ին հանուն։ Տուն կեր մին Ե, Ը, Թ ջան մեռաւ։ Այս երկրում Էոգճ ջան մեռաւ։ Զալ-խան շահին արդ արեց. այսպէս երկրիս սիթամ եղաւ։ Խանն մարդ ղրկեց, Գանջու ըճ մարդ եկաւ, Նախջիվանայ Մահմադ-Ղուզայ խան եկաւ իւր ասկարովն, ամէն սուլթաններն եկաւ, բերթի չորս կողմն ասկար նստաւ, թէ չուրի
|| Շահ-Սլէման թագաւորէն մարդ գայ։ Դարցեալ յու- 30v
լիսի մէկուն չափար գայ Թարվեզ Ադրբէջանայ վէզիր Միրզայ Իբրահիմի վերայ, թէ՝ դու գնայ, Երևան նստէ, թագաւորական դրամով շինէ։ Ահայ յուլիսի ժբուն Միրզայ Իբրահիմ մտաւ Երևան։ Յուլիսի իգուն Երևանայ չափար եկաւ շահի յօքմով, Աքուլաց ու Դաշտէն իգ մարդ տարաւ Երևան, որ բերթի վերայ բան անէն։ Ոչ թէ միայն Աքուլաց, ամէն երկրի տարան։ Մինչի ԼԳ թուման Աքուլաց ու Դաշտէն խարջ գնաց։ Այսպէս այս խան ու բէկլար կացին, մինչի Ձուն եկաւ։ Ապա շահէն դաստուր եկաւ, ամէն մարդ

գնաց իւր տէրն։ Ապայ շինուԹիւն կիսատ մնաց. փոքր փոքր շինեում էն։

* Դարցեալ, շարժն առաջի գալն օր ու գիշեր ժ, ժբ յետ շարժէր։ Այս փոքր փոքր գալով մնաց, մինչև էլաւ շաբաԹն և ամիսն մին յետ կու գէր, մինչի Բ տարուն, ապայ կտրեց։

§ 126 *1128 յունիսի իեռուն, օրն գշաբԹի, ես Զաքարէս այսօր Երևանայ դուս եկի, յունիսի իթուն եկի Աքուլիս, օրն կիրակի։* 31r

§ 127 *1128 սեպտեմբերի իգուն Աքուլիս այսօր մին վրացի եկաւ ժե ձիաւորաւ, անունն Ըռստամբէկ, քրիստոնայ։ Սայ եկաւ, գնաց մեր Աքուլայց ապայ Մուսայբէկինց տունն։ Զերայ այս Ըռստամբէկիս քվեր ապչիկն Ընպհան շահի հարամուն կնի. այս գ ամ է, որ Շահ-Սլէման թագաւորն այն ապչիկն կու տայ Մուսաբէկն կին։ Այս Մուսայբէկս կին առաւ, եկաւ Աքուլիս իւր հայրենի տունն։ Երբ որ Ըռստամբէկս լսեց, թէ իւր քվեր[1]) ապչիկն շահն տվել այ Մուսաբէկն, ե խաս գեղն տվել Մուսաբէկն, այսպէս մեծացել ա[2]), եկաւ, տէսաւ, մինչի նոյմբերի Բ կացաւ, այլվի գնաց Վրացտուն։ Ըռստամբէկն Մուսաբէկի տան էր. մարդիկն Աքուլիս դունաղ պահեցին։ Շատ խարջ գնաց։* 32v

1128 հոքտեմբերի մին Օրդուվարի դաղին մաղուլ էլաւ, տէղն շխալիսլամ նստաւ։ Քանզի օրդուվարցի Միրզայ Ուսուֆի տղայ, անունն Միրզայ Աբուլ Յուսէն, սայ Ընպհան սադրուն անէ, շխալիսլամուԹիւն վերայ կառնու, գայ Օրդուվար նստի։ Խիստ անողորմ, անիրաւ մարդ էր։ Շատ եկեղեցոյ զարար տվեց։ Աքուլայց ԹէՀ վանքի, ԹէՀ եկեղեցոյ ծ Թուման առաւ, մահանայ ԹէՀ՝ նոր էք շինել, յօքմ ունիմ։ Շատ անիրաւ 33r

1) Զեռագրում՝ քվեր։
2) » մեծացեալ։

բաներ արաւ[1]։ Յետով զազին էլ գնաց, զազութիւն առաւ, եկաւ, Օրդուվար նստաւ։

* Յետով այս շխալիսլամս ընկաւ գինախմիլ, լաւանդութիւն անիլ։ Իւրան համար ուտելով, խմէլով, ման գայ։

1128ումն Էջմիածնայ Միքայէլ աթոռակալ վարդապետն եկաւ Գողթան տունն նվիրակ։ Այս գ ամ է, որ Էջմիածնայ նվիրակ չէր եկած։ Քանզի Յակոբ կաթուղիկոսն այս բ ամ է, որ Էջմիածնայ Սէֆիդուլի խանի ձեռացն փախաւ, գնաց Վրացտուն, Վրացտան վերայ գնաց Խորմացտուն։ Այս աթոռակալ Միքայէլ վարդապետն դէքտեմբերի ծեռումն եկաւ Աքուլիս, մին քանի օր կացաւ, նվիրակն առաւ, գնաց Էջմիածին. այս է։

§ 128 ب — Պատճառ այս է. փառակեցի հայ ումն, Զիմշիտ անուն, թուրքանայ։ Իւրմէց զաւակ չելաւ. շատ ապրանք ունէր. ինքը մեռաւ, մնաց իւր ծառային։ Անցաւ ժամանակ։ Ախպէր ունէր, անունն Առաքել։ Այս Առաքելս այլվի թուրքացաւ, դավի արաւ ախպօր ծառայիցն, բան չի շինեց։ Առաքելն մեռաւ, սորայ մնաց բ տղայ։ Սոքայ էլ թուրքացան, այլվի Զիմշիտբէկին ծառային յետ դավի արին, այլվի բան չի շինեց։ Մինչի ի տարու դավի արին, քանի յետ շահի դուլբերին, շատ խաներ դիվան արին, ամէն ապրանքն փուչացաւ։ Այսու յետև Առաքելի տղերքն, որ է Շահդուլի, Ալահդուլի, ընկան հայերի հետ միրասդավի։ Շատ շատ հայերի դավի արին, թէ փառակցոյ, շուռթեցոյ, ըռմեցոյ, աքուլեցոյ։ Անցաւ ժամանակ, այս Շահդուլիս շահէն դուլ բերի, գայ Երևան. խան էր Զալ-խան։ Զալ-խանն մին աղի օհտայ անէ, անունն Մեհրալի-բէկ, այս շահի դուլս, Զալ-խանի նօքարն մին ՝ ձիաւորաւ ‖ 1128 օգոստոսի ժբումն 31r 31v

1) Զեռագրում՝ բանեբաւ։

գայ Աքուլիս։ Աքուլաց հաքիմն էր աքուլեցի Մուսաբէկի թոռ Մուսաբէկն։ Սայ տուն բանալ տայ, վեր գան, թէ՝ Շահղուլին շահէն, խանէն յօքմ այ բերել, թէ աքուլեցի Ղարեց օյմաղն, որ է ծ, ծբ տուն, ամէն իմ զօվում այ։ Այս ոյմաղիս մեծաւորն Մելիք-Մանվելն կնի, Պետրոս։ Սոքայ տան չեն ելած. Մանվելն Թարվեզ կնի ուրիշ բանի համար, Ոսկան, Պետրոս Երևան կնին այս դավուս համար։ Վերոյ Մէհրալիբէկն Բ օր Աքուլիս կացաւ։ Երևանայ Զալ-խանէն Ոսկան, Պետրոսն յօքում հանէն, ղրկէն Մէհրալիբէկին վերայ, թէ դոցայ յետ բան չունիս, եկ։ Մէհրալիբէկս զարուլ չանէ, թէ՝ սուտ այ։ Մարդ ղրկի, Ղարինց դռներն կոտրատի, թէ՝ Մանվելն տան այ։ Այս Մանվելիս մին տղայ կնի Ի ամաց, մին քանի ամիս էր, յիվանդ էր։ Թուրքն իրիգունն որ դռներ կոտրատի, տղէն լոյսաբացին-մեռաւ։ Ղարինց Ջումիաթն մեռնէն բառնան, թէ տանէն Երևան։ Գնան Նախջիվան, Նախջիվանայ Մահմադ-Ըռզայ խանի հայր Ալիղուլի՝ խանն թողնու ոչ, գնան։ Մեռելն տանին, սուրբ կարապետումն թաղէն, շատ կռիվ անէն, վարթարաք անէն, գնան Երևան։ Մին 6 թուման ավել այս դավուս դուս էլաւ Ղարինց օյմաղէն վասն հաւատոյ։

§ 129 1128ումն աքուլեցի Մասէին Առզումայ եկաւ. Զալ- 34v
խանի գրոշն եկաւ, Երևան զառաբի նստաւ։

§ 130 1128 այսմ ամի Աքուլաց դիր շատ տղայհասակ 30r
մարդ մեռաւ։ Թէ Ըստամբոլ, թէ Իզմիր մինչի Ի մարդ մեռաւ, զերայ ժահ էր այն հրկիրն։ Աքուլաց դիր զուլմ ելաւ։

§ 131 1128ումն Աքուլաց հաքիմն էր աքուլացի Մուսա- 32v
բէկի թոռ Մուսաբէկն։ Աքուլաց մէլիք էր Մէլիք-Ովանէսն, որ է Օվի։

§ 132 1129 տրէ գ, արամ ԻԲ, յունվար գ, օրն գշաբաթ, 33v
ես Զաքարեայ այսօր Աքուլիս Ջրաւրհնէք արարի։ Դ
մահլէն ամէն ժողովեցին Վերի Թաղի եկեղեցին, զգեստավորեցին, մեր վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն զգեստավորեց. մինչի ծ, կ շապիք յաքնող կէր։ Նաղրով, զոնով գնացին Շաբի կհաւն, ջուր աւրհնեցին. լաւ, արև օր։ Այսմ ամի Աքուլաց հաքիմն էր աքուլեցի Մուսաբէկենց Մուսաբէկն։ Սայ ուղարկեց, Օրդուվարայ շխալիսլամն, դ, ե մեծ մարդ կանչեց, ինքն, թէ այլ քուրդեր նստան, չուրի ջուրն աւրհնեց, խաղաղութեամբ, սիրով ամէն վեր կացին, իւրենց[1]) տեղն գնացին։ Թէ Օրդուվարայ քուրդերին, թէ Աքուլաց քուրդերին խարջ չառին հայերէն։ Միայն մին աման էմիշ, գ քալայ շաքար տարան. այս էր խարջն։

§ 133 1129 յունվարի ԻԵումն Աքուլիս Վերի Թաղի սուրբ 34r
Քրիստափոր եկեղեցումն[2]) այսօր գանձանակ սահմանեցինք, որ ամէն շաբաթ իրիգուն գանձանակ բռնէն, եկեղեցուն համար շորագին լինի։ Առաջմէ կայր ոչ, նոր ըսկսբն արարաք։ Դութի շինեցի, Գրանէի փակով, մհրեցինք, որ թաբաղ բռնեն, ինչ որ գայ, ածէն դութինն։ Ես Զաքարէս, դ, ե տարի այ, ասելով՝ այսօր ըսկիսբն ընկաւ Աստուծով։

§ 134 1129 քաղոցի ԻԳ, փետրվարի ԻԲ, օրն կիրակի, ես 33v
Զաքարեայ բուն բարէկենդան արարի Աքուլիս. լի և առատ, ապա դիր սաստիկ ցուրտ և ձիւն կայր, որ Բ թիզ ավել ձուն կայր գետնի։ Ահայ գ ամիս այ, որ

---

1) Ձեռագրում՝ իւրեց։
2) » եկղեցումն։

ձուն այ եկել։ Այսմ ամի անչափ ձուն եկաւ վասն մեղաց մերոց։

§ 135 1129 մարտի Էուն, օրն կիրակի, որ Էջմիածնայ 34r
աթոռակալ Միքայել վարդապետն Նախավկայի վանքումն այսօր առ Աստուած հանգեաւ։ Մարմինն անդ դիր հանգստեան եդին եկեղեցոյ պարսպին դուս, յարևելեան կողմն կոնդին թաղեցին։ Սայ էր կէ ամայ։ Սայ էր ի գէղջէն Շամբու։ Սայ ինքն կենդանի վոխան դ ամով առաջ իւր տէղն, որ էր Նախավկայն, տված էր իւր ախպէր որդոյ Պէտրոս վարդապետին։ Սորայ վանքն, աթոռն էր Նախավկայն, ապայ Էջմիածնայ սնայգլուխն սայ ընդրեցին Էջմիածնայ աթոռակալ, քանզի առաջմէ քանի անգամ աթոռակալութիւն էր արարեալ։ Այս պատճառէս եկեալ էր Գոխտան տունն նվիրակ, ժողովեց, գնաց Նախավկայն, մինչի ի օրի յիվանդացաւ, անդ հանգեաւ։ Շատ աշխատաւոր, լև մարդ էր։

§ 136 1129 ապրիլի ժա, ուէհէկի ժբ, շամշ իրուն Աքուլիս ես Զաքարեայ այսօր զատիկ արարի։ Ապայ աղքատ զատիկ էր, ամէն ինչ սուղ էր։ Ոչխարի մեան լիդրն գճ դիան, պանիրն գճն դիան. այս կերպիւ էր։ Զկրայ գ ամիս այ, որ ձմեռն այ։ Ինն իգ էր զատիկ։ ibid.

§ 137 1129 մայիսի գուն այսօր մեր Շմաւոնի Երևանայ 34v
կնգանէ եկած տղայ Ապամիրն մօրէն թահր արած եկաւ Աքուլիս. այս է։

Այլվի սեպտեմբերի իուն եկաւ Երևան։

1129 մայիսի ժբուն Ինն բ օրական, եկաւոր կենդանակերպուն,[1]) Աքուլիս ը սնաթուն մին այնպէս անձրև եկաւ, գետն սէլաւ եկաւ, այլ ոչ ճանապարհ, թէ առու, թէ անգութք, թէ ժարլղան, ամէն տարաւ։ Բալքի թէ Աքուլայց բճ թուման զարար տվեց։ Մին

---

1) Զեռագրում՝ Ինն Բ օրական. եկաւոր կենդանակերպումն հեղինակը գրել է լուսանցքում՝ ուղղահայաց տողով։

տղայ էլ տարաւ դափանցի, ժ, ժբ տարեկան։ Ես Զաքարէս մէն թումման զարար քաշեցի, քանզի Ներքի այգուն մին ժ թթի պարաւ, ճանապարհ, առու տարաւ։ Ամայ Տրունայց, քանց Աքուլայց շատ զարար էլաւ։ Կամք Աստուծոյ եղիցի։

1129 մայիսի Իումն ես Զաքարէս այսօր համբարձում Աքուլիս արարի։

1129 մայիսի ԻԷումն, օրն Եշաբաթ, այսօր արուլեցի Մուսաբէկի թոռ Մուսաբէկն մեր Աքուլայց բազարումն յարաւայի կողմն մին քարվանսարայ յիմն ձգեց, դուգան, բաղալ շինէ։ Տէղն առաւ գ, դ մարդուանէ, գինն ԼԲ թումման։ Սարքար թումմանեց Առաքելն էգիր, որ շինէ։

§ 138 ↳ 1129 յունիսի ժումն Աքուլիս, որ աքուլեցի խօջայ Ղօզաղն առ Աստուած փոխեցաւ, շատ ապրանքի, ըռզակի տէր էր։ Սայ սարքարութիւն արաւ, որ Վերի թաղի եկեղեցին շինեց։ Շատ աշխատանք արաւ։ Աստուած հոգոյն ողորմի։ 35r

1129 յունիսի ժումն որ Մուսաբէկն այսօր Աքուլայց դուս էլաւ, գնայ Երևան։ Զերայ աքուլեցիք ծածուկ մանսար վէքիլ ին արարեր աքուլեցի Խօջումենց Մանվելն, որ գնայ Ըսպհան գանգատ։ Ահայ ժդ ամիս այ, որ գնացել այ Ըսպհան, յօքում հանել Երևանայ Զալ-խանին օհտու։ Այս ժե օր այ, որ Մանվելն եկել այ Երևան։ Այս Մուսաբէկս որ լսեց, սայ էլ գնայ Երևան, Ավգուլաբէկն, Մէլիք-Օվին յեռն տարաւ, զերայ հսաբ էն ուզում մելիքէն։ Ահա այս գ տարի կէս այ, որ Մուսաբէկն Աքուլայց հաքիմն է. ոչ թէ միայն Աքուլայց. Մեղրի, Լէհրամ, Ազտապատ[1]), Շորութ սորայ զաֆտումն այ։ Դարցեալ, յուլիսի ժգումն Զալ-խանի նազիր, որ է Ըռազայդուլի-քէկ, Ի ձիաւորաւ այսօր եկաւ Աքուլիս, գնացին փէշվազ անթիւ

---

1) Զեռագրում՝ Ազպատաս։

մարդ։ Մէլիք-Օվին, Մանվելն այսօր եկին Աքուլիս նազիրին յետ, որ Մուսաբէկին առած ահտազն գրեն, մէլիքի հաբն տէսնուն։ Ապայ Մուսաբէկն մնացել այ Երևան։ Այսօր Աքուլիս մին չալխանմիշ էլաւ։ Դարցեալ, օգոստոսի իբ-ումն խանի նազիրն եկաւ Երևան։ Օգոստոսի իէ-ումն գանգատաւորքն եկին ճի մարդ։ Թէ Աքուլաց, թէ Դաշտէն, թէ Շորութու, թէ Ազատապատու, թէ Մեղրու ճի մարդ էկաւ։ Մեղրու գ, ե մարդ էր, ամայ միուս գեղերիցն շատ էր, ամէն ըէլու մարդ էր։ ‖ Այս Ջումիաթա եկին Երևան։ Շատ, 35
անթիւ խօսք, դիվան էլաւ։ Խանն Մուսաբէկիցն շատ փող կերաւ, բալքի գճ թուման ալել կերաւ։ Խանն ընկաւ Մուսաբէկի կողմն, թէ՝ բարիշեցէք։ Գանգատաւորքն քիչ քիչ գնացին, մնաց մին ի մարդ, խաս գեղի մարդն։ Առաջ Զալ-խանի կաշառք ին ասել, թէ՝ Մուսաբէկն, թողզ թագաւորի մալիշհաթն, թէ ահտազ, թէ սիթամի, այս գ խասէն գռ թուման առել այ։ Պլտի խանն հաղիղաթն անի, մեր գռ թուման առնի, ձեզ տայ, մեք ճծ թուման տանք խանն։ Յետով Ըսպհանայ խաբար եկաւ, թէ Մուսաբէկի հերն, որ էր Իսախան-բէկն, մեռաւ։ Զերայ խասերն այս Իսախան-բէկն, մեռավ։ Զերայ խասերն այս Իսախան-բէկս էր իշարայ արել, այս չանիբէս խասերն սոցանէ կարեցաւ։ Յետով Զալ-խան մին քանի մարդ բռնեց, բերին բճծ թուման Մուսաբէկիցն առին, տվին խաս գեղի մարդն, գիր առին, բարիշեցին, գնացին։ Ամայ գ ամիս Երևան կացին, ամէն գնացին։

1129 օգոստոսի մէկումն ես Զաքարէս Աքուլաց դուս էլայ, օգոստոսի զումն եկի Երևան։ Մեր Փասպարն յետս բերի. առաջին դուս գալն է։ Դարցեալ իմ Երևան գալու պատճառն այս էր, որ Երևան մին զառաբի, Հաջի-Թաղի անուն ումն, գնայ Զալ-խանին արզայ կուտայ, թէ՝ Սիամոնիցն ծբ թուման կուզեմ։ Ես չանիբէս Սիամոնի կնիկն մին հայ մարդի վարդ-

տայ, գրկի Աքուլիս, թէ՝ ամ Զաքարէ, հասնել թրխ-
տիս գալ պիտիս։ Ես Զաքարէս ահայ այսօր եկի Երևան։

§ 139 Թվին ռճիթ օգոստոսի բուն Ըստամբոլ Աստուա- 36v
ծածին եկեղեցումն Յակոբ կաթուղիկոսն առ Աստուած
փոխեց։ Տարան Բէկ-օղլի հանգիստնումն թաղեցին։
Օգոստոսի իէումն գիրն եկաւ Երևան։ Յակոբ կաթու-
ղիկոսն էր հգ ամաց։ Սայ կաթուղիկոսութիւն արաւ
իե տարի։

§ 140 1129 օգոստոսի էումն այսօր Հաջի-Ալի խան մտաւ 36r
Թարվեզ, որ՝ այս քանի ամ է, որ Թարվեզ չայնշին
նստէր։ Ահայ այս Հաջ-Ալի խանս Շահ-Սլէման թա-
գաւորի յօքմով խան եկաւ, որ է մեծ սիփասալար
խան։ Այս խանս այնպէս յօքմ ունի, որ ամէն բէկ
ու խան իւր նոքարի սանն տեսնու, որ գարուն սայ
ամէն խանի սանն տեսնու. այս է։

1129 օգոստոսի ժեումն ես Զաքարէս աստուածա-
ծին էջմիածնումն [1]) արարի, որ անչափ ուխտաւոր էր
եկել. շատ թամաշայ էր։ Ես Զաքարէս Երևան էի, գնա-
ցի էջմիածին, այլվի կիրակի իրիգուն եկի Երևան։

1129 օգոստոսի [2]) ժթումն Երևան այսօր շատ փէշ-
վազ արաւ, Զալ-խան ինքն էլ գնաց, որ մինչի բո-
մարդ Հաջ ին գնում։ Սոցայ գլխաւոր էր Ադրբէջանայ
վէզիր Միրզայ Իբրահիմի ախպէր Միրզայ Սադխ։
Սայ էր շահին մուստոֆայ մամլիք։ Միուս գլխաւորն
էր Մաշադու քալանթարն, որ այս քալանթարս շահի
բարիբար խազինայ ունի, մուլք, որ կասին, թէ օրն
իե թուման գալուր ունի. այսպէս մարդ է։

* Դարցեալ, օգոստոսի իգումն Երևանայ
դուս էլաւ, գնաց։

1130 մայիսի իեումն վերոյ հաջիլարն
եկին Երևան։ Միրզայ Սադխն Քաբումն

---

1) Ձեռագրում՝ էջմիածումն։
2) » օգոսի։

մեռած էր, քալանթարն գնացած էր Բաղ-
դադու վերայ, բաղին եկին Երևան։

§ 141 Թվին 1129 դեքտեմբերի ժեռումն Աքուլայց սուրբ 36v
վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն այսօր Էջ-
միածնայ դուռս էլաւ Հայաստան վարդապետաց, դով-
լաթավորաց, խանի գրով, մանսարով, որ գնայ Երու-
սաղէմ, թէ Ըստամբոլ Եղիազար վարդապետն բերեն
Էջմիածին, կաթուղիկոս դնեն։ Այսպէս սահմանք տե-
սին[1])։ Դարցեալ, Պետրոս վարդապետ գնաց Երուսա-
ղէմ, Եղիազարին յետ լոյսն տեսան, եկին Ըզմիր,
Բուրսայ, Ըստամբոլ[2]), ապայ ծովով եկին Տարապղոն,
եկին || Առզռում։ Օգոստոսի լուսն թվին ռճլա հրաշալի
այսօր եկին Էջմիածին, աթոռ նստաւ։

* Ամայ կաթուղիկոսութիւն յանձ չառաւ.
անունն նորայ, նայ կու յիշէն։ Այսպէս
մնաց, ռճլբ Պետրոս վարդապետն աթոռակալ 37r
դրեց. Բ ամիս արաւ, այլ դուս ընկաւ, Վի-
րարի[3]) Դաւիթ վարդապետն եկաւ աթոռա-
կալ։ Ապայ Պետրոս վարդապետն ռճլբուսն
դեքտեմբերի խուսն Աքուլիս իւր վանքն
եկաւ։

§ 142 Լ 1129ուսն թվին օսմանցու Սուլթան Մահամադ թա- 36v
գաւորն հրաման կու տայ Առզռումայ Իբրահիմ փա-
շին, թէ՝ քո գոլբակոմն գնայ Վրաստանայ երկիրն Դա-
գիան, Շահնուազատ խանի տղայ Շահնազար խանին
վերայ կռիվ։ Պատճառն այս կընի, թէ Ասլան փաշէն,
որ էր Ախլցխու փաշէն, յետ Շահնազար խանին յետ
մին այ դառած։ Այս պատճառէս Առզռումայ Իբրահիմ
փաշէն գայ Ախլցխայ, Ասլան փաշի գլուխն կտրի,
ինքն գնայ Դագիանու երկիրն Շահնազար խանի վե-

---

1) Ձեռագրում՝ տեին։
2) » Ըստմբոլ։
3) » վիրեի։ Տպագիրը (յերես 81) նույնպես կար-
գում է Վիրարի։

բայ կռիւ. մին Բ, գռ[1]) մարդ փաշէցն կոտորվի, փաշէն
յետ դառնայ, սեպտեմբերի խումն գայ Աղգռում, զերայ
ձմեռն վերայ հասաւ։ Դռ վրացու գերի բերաւ ասկարն։

§ 143 Թվին 1129ումն որ Աքուլայ էլն կանկնեցին, յօքմն 32r
բերին Շահ-Սլէման թագաւորէ, բերին Երևանայ
Զալ-խանին օհտու, դիվան արին, շատ աղմուկ էլաւ,
Ե խասն Մուսաբէկէն կտրեցին։ Մուսաբէկի հայրն
Ի տարի ժօտ էր, որ Ըսպհան էր, այսմ յամի նայ
Ըսպհան մեռաւ, անուն էր Իսախան-բէկ։ Շահ-Սլէ-
ման թագաւորն Ե խասն կու տայ խանդուժ-բաշի
Խոստրով աղէն։ Խոստրով աղէն կտա իւր մուսահիբ,
շահի դուլ այլվի Խոստրով աղէն, իւր անվանակիցն։

Ն* Թվին 1130ումն այս Խոստրով աղէն կու
գայ, Աքուլիս կու նստի, մարդիկն ղրկի
Մեղրի, Շուռութ, Լեհրամ, Ազտապատ, իւր
համար աղայութիւն կանի։ Դարցեալ, Ա-
քուլայ Ջումիաթն Մելիք-Օվին բռնէլ կու-
տան աղին, շատ սխասաթ անէն։ Այսպէս
կանէն. վիղն գունդա կուտան, նստացա-
նէն էշ, նաղրով, զռնով Աքուլիս, Դաշտն
ման ածէն։ Դաշտէն Մէլիք-Սլէմանն այլվի
այսպէս ման ածէն, թէ՝ ամէն դուք արիք,
որ Մուսաբէկն այսպէս սիթամ արաւ մեզ։
Այս պատճառէս այսպէս սխասաթ բերին
Մէլիք-Օվու գլուխն։ Մին ճլ թուման ա-
ռին, թողգ դիվանում խարջածն։ Օվուն
բալքի բճ թուման դուս էլաւ, ինքն էլ
մելիքթենի դուս ընկաւ։ Ամայ Սլէմանն
կոբցրին. Ասուած գիտէ, թէ ինչ էլաւ։
Աքուլայ մէլիք Էխանեց Ափրահամն է[2]),
Խոջումէնց Ոսկանն։

---

1) Ձեռագրում՝ բոգ։

2) » Ափրահամն է բառերից հետո գրած Ե այսպէս էլաւ ու հետո գրչով ջնջած։

(4)

§ 144 Թվին 1130 յունվարի գ՝ արամ իբ, տրէ ամսոյն 35v
է, օրն եշաբաթ, ես Զաքարեայ այսօր Չրաւրննիք
Երևան արարի։ Չրաւրննիքն ամեն մարդ իւրենց եկե-
ղեցումն արարին, գերայ դուս չի գնացին։

§ 145 1130 փետրվարի ժգումն Երևան ես Զաքարիայ 37r
բուն բարեկենդան արարի։ Այսմ ամի սղութիւն էր
Երևան։ Հացի ի խտիլն խ դիան է, անուշն խ դիան
էր, ամայ ձ դիան ալեվ նստէր, ամայ են եվ կայը ոչ։
Գարին՝ կ դիան, բրինձն՝ ճի դիան։ Ամայ ձմեռ չե-
լաւ։ Այսմ աւուր որպէս գարուն է։ Այսօր Ֆինն էր
գ օրական։ Ցորենու սօմարն զճ դիան էր, յետով ռ
դիան էլաւ։[1])

1130 ապրիլ գ, շամս ժդ, մէհէկի դ, Ֆինն իգ, այ-
սօր զատիկ ես Զաքարեայ Երևան արարի։ Խիստ սղու-
թիւն էր այսմ տարի։

1130 մայիսի ժբումն Երևան ես Զաքարէս համբար-
ձում արարի։ Դիր հացի սով էր, որ ժբ խտիլ ցորէնն
ճ դիան կէր ոչ։

1130 մայիսի ժեումն Ըսպհանայ այսօր Շահ-Սլէ-
ման թագաւորէ մին կապայ, մին մանդիլ խալաթ
եկաւ Երևան Զալ-խանին համար։ Շատ, անչափ փէշ-
վազ գնացին։ Շահ-ժուրդի խալաթն խանն հաքաւ,
քարանով, շատ ձիաւորաւ մտաւ բերթն։

1130 օգոստոսի իումն այսօր Երևանայ ես Զաքա-
րէս, մեր տղայ Քասպար, երկուս ել նաչաղ, Չերմոտ,
դուս եկի, օգոստոսի իգումն եկի Աքուլիս։

---

1) Ձեռագրում՝ էլ։ Տպագիրը (յերես 82) վերջացնում է ռ դիան բառերով։

§ 146 Թւին ռՃԼ հոքտեմբերի ժառւմն, օրն գշաբթի որ 35v.
Աքուլիս նոր ձուն եկաւ, շատ զարար տվեց։ Քանի
իքի խաղողն մնաց ձնի տակի. Բ օր ձունն մնաց, այլ-
վի վեր կացաւ. ապայ սառեց ոչ։

§ 147 1130ռւմն Երևան սով ընկաւ, որ ցորենի սօմարն 30v.
դարցաւ ռՃԵ դիան։ Գարին քանց ցորենն թանկ էր,
որ սօմարն ժԲ լիդր Թարվեղի այ, որ է լիդրն ժԵ
խատիլ։ Բրինձն մինչի ԲԵ դիան դարցաւ։ Շատ մարդ,
աղքատներն պաս չի պահեցին, մածունով, պանիրով
անց կացուցին։ Շատ աղքատ, թէ թուրք, թէ հայ,
խոտով, կանանչով ապրեցան։ Հացն թուրքով, ժասա-
վուլով կուտին մարդի։ Ոչ թէ միայն Երևան էր այս-
պէս, ապայ Ղափլանթու մինչի Թողաթ այսպէս սղու-
թիւն էր։ Ամայ Երևանայ նման ոչ էր սղութիւն։
Ապայ հացի անուն էր հաց. վայ մեզ, որ հոդ եր-
աթար էր։ Փառք Աստուծոյ։

[Յերրորդ բաժին. ԱՎԱՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

§ 148 Թվին ռղզ մարտի եռւմն Աքուլիս, որ ես Աքուլեցի 37v
Բուրդունց Ադամիրի որդի Զաքարէս, որ ես Զաքա-
րէս էլի ծէ ամաց, նախ և առաջի իմ ճանապարհ գնա-
լըն այս է, որ մին բէռն խամ ապրիշմով, իմ հօր,
մօր, իմ եխպայր Շմաւոնի, սոցայ կամով ինձ դրին
իմ հօր եխպօր որդի պարոն Նիկողոսին յեռ, գնացի
Իզմիր։ Պարոն Նիկողոսն[1]) էլ մին բէռն ապրիշում
ունէր։ Դարցեալ, Նիկողոսն իւր ապրիշումն ծախէց ոչ,
գնաց ի Ֆռանգստան, ի քաղաքն Լիոռնայ։ Դարցեալ,
ես Զաքարեայ իմ մին բեռն ապրիշումն, մեր Աքու-
լայց շատ բազրկան կեր Իզմիր, ծախեցին, թէ խարջ,
թէ գմրուկ, թէ ժոլ բորջի, ամէն տվին, ճնաց խալիս
ըճեռ մառչիլ սիվիլայ։ Զերայ ապրիշումի լիդրն, որ
գ հողայ է, լիդրն տվի ԼԲ մառչիլ. քնար ապրիշում
էր, լաւ բազարի հանդիրեցայ։ Դարձեալ, այս փոդս
ըճ մառչիլ տվի մեր աքուլեցի աղբոյաղչի Վարդան,
որ բերաւ Աքուլիս, տվեց իմ հայր Ադամիրին և իմ
եխպայր Շմաւոնն։ Դարցեալ, ես Զաքարեայ ի մառ-
չիլ փոդ վեր կալայ, գնացի Բուրսա, գ ամիս կացայ,
գնացի Ըստամբոլ, ինձ համար ալիշ-վերիշ արարի։
Դարցեալ, իմ եխպայր Շմաւոն ժեռ ուղարկած փոդն
վեր առնու, գնայ Ըսպահան, ապրանք առնու, ծախէ։
Դարցեալ, այս Շմաւոնս գ ֆիթիլի, մի քանի դանակ,
դվթ, դալամ, նախշուն մին քանի զատ աղարկեց Ը-
ստամբոլ, ինձ Զաքարիս հասաւ։ Ծախեցի, ձ մառչիլ
հանեց, որ էլաւ իմ հօր փոդէն ինձ հասաւ մին ճձ
մառչիլ։ Այս էլաւ ինձ Զաքարի հայրենի փոդէն մա-

---

1) Ձեռագրում՝ Նիկոսն։

յայ։ ‖ Թվին ռղբ ապրիլի ժբ-ումն ես Զաքարեայ Ըս- 38r
տամբօլու գուս եկի, յունիսի գ-ումն եկի Աքուլիս։ Թէ
նապա, թէ վէջ, ՝բ թուման վոդ բերի. դ թուման իմ
հայր Աղամիրն վեր առեց, խարջի արաւ, գերայ Շմա-
ւոն տան չէր։ Մնաց ինձ Զաքարիս մայայ ՝բ թու-
ման։ Ես Զաքարէս Երանեց Աստուածապոմն ինձ ժբ
թուման մայայ տվեց, գրեց աքուլեցի Մարքարի որ-
դի Արզանուն յետ, թէ՝ Արզանին կարդացել չէ, դու
սրայ յետ գնայ, սրայ ալիշ-վերիշն գրես։ Այս Ար-
զանիս Աստուածապովիս ընկեր էր. գ-ն թուման մա-
յայ Արզանուն յետ էր։ Ես Զաքարէս Արզանուն յետ
գնացի Ըսպահան, խրիդ արարիք Ըստամբօլ, ծախե-
ցինք, եկինք Երևան, յետ դառանք գնացինք Թվիս,
փողն զառավխանումն [1]) կտրեցինք, եկի Աքուլիս։ Ես
Զաքարէս շատ փորցանք, ջավայ, չարչարանք քաշեցի,
այս Արզանուս յետ թվին ռ-ն սեպտեմբերի ԷՈ-ումն եկի
Աքուլիս, ինձ Զաքարիս շախ ու մայայ հատաւ ծգ
թուման։ Այս Աստուածապովս ասաց, թէ՝ Արզանուն
յետ գնայ ու եկ, քեզ չոկ մայայ տամ։ Ել տվեց ոչ.
պատճառն իմ եխպայր Շմաւոն էլաւ։ Պատճառն այս
է, որ Շմաւոն Ըսպահան նախ և առաջի մեր ապրիշու-
մի փողն խրիդ կանէ, մին յետ Թարվեզ կու ծախէ,
մին խրիդ կանէ, գայ Ըստամբօլ։ Այս Շմաւոնս եկաւ
Ըստամբօլ, ես Զաքարէս բանս տէսել ի, դուս գա-
լիս եկի Աքուլիս։ Այս Շմաւոնս աքուլեցի Թուգա-
նեց Ղուլին Շմաւոնիս մայայ կու տայ, այս մա-
յէս տանի Ըսպահան, կէսն կու տայ մեծ Դալու Ա-
լիղուլի խանին, որ եկաւ Թարվեզ, խան նստաւ,
կէսն կու տայ մեծ Լալայբէկի տղայ ‖ ուղբաշի Ալահ- 38v
վերդի-բէկին։ Այս Շմաւոնս Ըսպահանայ որ կու գայ
Թարվեզ, թէ Ալիղուլի խանէնանէ փոդն ուզէ, այս
խանս այս Շմաւոնս կու տանի, գինի խմեցնել կու

---

1) Զեռագրում՝ զառախանումն։

տայ։ Յենց որ գինովանէին, խանն կասէ, թէ՝ ա՛յ Շմաւոն, ասի, թուրքացիր, քո փողն տամ։ Շատ խօսքեր կասին, այս պատճառէս այս խանն ինքն իւր թուրն վեր ունի, գնայ այս Շմաւոնիս վերայ, թէ վիզն տայ, այս Շմաւոնս ձեռաց կու գնայ, դուս կու քաշէն. էլաւ Բին միջումն աղմուկ։ Յետով խանն մազուլ կանէն. այս Շմաւոնիս փողն կորաւ։ Այս պատճառէս առաջի յիշած Աստուածապոմն եկ ինձ Զաքարիս մայա չէ տալ, թէ՝ տանի, ախպօրն նման կու տայ խանի, բէկի, կու կորէ. այս էր Դարցեալ, այս Շմաւոնս խափանօք մարդ աղարկէ Աքուլիս, թէ՝ ա՛յ Զաքարեայ, ինձ համար ՝ Թուման փող աղարկէ, որ խիստ էժան չուխայ եմ առել, տամ քեզ։ Ես Զաքարէս ՝ Թուման աղարկիմ, գիտեմ, թէ ըղորթ այ։ Սայ խօվ պարտք ունէր, կու տայ իւր պարտքն, չուրի մին տարի մօտ, այլվի իմ ՝ Թումանս տվեց, շախ չի տվեց։ Դարցեալ, այս Շմաւոնս տէսաւ, որ խանն փող չի տվեց, գնաց Երևան, թէ Էալա բէկի տղինանէ փողն առնէ։ Քանզի Քէ-Խօսրով խանն կապանօք տանէն շահն, այս Քէ-Խօսրով խանիս զալուղ կու մնայ Երևանայ օլքին վերայ։ Շահ-Աբաս թագաւորն Էալա բէկի մեծ տղայ Մահամզուլին խանութիւն տայ, աղարկի Երեւան, խան նստի։ Էալա բէկի || փոքր տղայ ուզրաշի 39r
Ալահվերդի բէկի ըռաղամ տայ, թէ՝ գնայ Երևան, Քէ-Խօսրով խանի զալուղն ժողովէ, բէր, շահի ապրանք է։ Այս Շմաւոնս փողն տվել էր այս Ալահվերդի բէկս։ Սայ եղև այս Շմաւոնիս պատճառ, որ մնաց Երևան։ Այս Շմաւոնս շատ պարտքի ներքև մտաւ, որ Երևան Նաջաֆզուլի խանին, Արասզուլի խանին, Սէֆիզուլի խանին գարաք ժարաղ կնի, համ ըռահտարութիւն կանի, համ զառաբի կնի, շատ հսաբի ներքև կու լինի, որ համբաւն ամենայն երկիր կու սիռի։ Այս ժամանակիս Շահ-Սէյլէման թագաւորն յօքմ գրէ Երևան Սէֆիզուլի խանին վերայ, թէ՝ այդ զառաբի

Սիամոնդ աղաբկէ, գայ Ըսպհան։ Պատճառն Աստուած գիտէ ու թագաւորն։ Թվին ռճժթ յոնիսի ծգումն այս Սիամոնս եկաւ Աքուլիս մին ի ձիաւորաւ, ժ օր կացաւ, ես Զաքարիայ քուլիայ զարար քաշեցի։ Այս Սիամոնս գնաց Ըսպհան, Է, գ ամիս կենդանի մնաց, դեքտեմբերի Էումն Ըսպհան մեռաւ, տարան, Զուղայու հանդիսանեռումն յարևելեան կողմն թաղէն։ Յետով մարդ եկաւ, թէ՝ ա՛յ Զաքարեայ, հալրաթէ եկ, թէ չի, շահիցն ղուլ այ գալիս, քեզ բերեն, որ Սիամոնի պարտքն, առուտուրն տէս։ Թվին ռճի յունվարի իառումն Աքուլաց ես Զաքարեայ դուս էլայ, գնացի Ըսպհան։ Ես Զաքարէս շատ փորցանք, շատ դարդ, շատ չարչարանք քաշեցի, Աստուծով պրծայ, օգոստոսի քումն եկի Աքուլիս, գնացի Երևան։ Հալայ մինչի գ տարի այս ախպօր Շմաւունիս համար շատ շատ չարչարանք քաշեցի. միայն իմ բօղազիս, շորիս տէր ի։ Այս եղև վասն մեղաց իմոց։ Բալքի Աստուած տայ, որդիքն դօվլաթաւոր լինին[1]), մեզ մին բերան ողորմի տան, որ ես հոքայավանի ձեռք չի տվի։ Միայն Աստուած գիտէ. Աստուած ողորմած է։

* Այս Շմաւոնս որ Ըսպհան մեռաւ, սաղրի գրով, հայի գրով վասիաթ կանէ, գրէ, թէ՝ իմ վեքիլ իմ ախպէր Զաքարէն իմ առուտուրն անէ, իմ ինչ որ բհամ գայ, իմ վէքիլ Զաքարէն գ յիսայ անէ. մին յիսէն ինքն վեր ունի, մին յիսէն այլվի ինքն վեր ունի, տայ իմ հոգոյս, մին յիսէն տայ իմ գ տղէն, մին աղչիկ ու իմ կնիկն, մինչի իմ որդիքն բալուղ ընի, հաբ տայ իմ տղերքն։ Դարցեալ, ես Զաքարէս որ գնացի Ըսպհան, Սիամոն գ ամիս էր, որ մեռած էր։ Ամէն զատն Զուղու դարուղէն, քալան- 39v

1) Ձեռագրում՝ լինի։

